



ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԷՆ 3 ԱՆՏԻՊ
ՆԱՍԱԿ՝
ԳԵՈՐԳ ՉԱԳՐԵԱՆԻՆ
(1946-1947)

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ
mihran.min@gmail.com

Այս յօդուածով հրատարակութեան կու տանք Յակոբ Օշականէն (1883-1948) երեք անտիպ նամակներ, յղուած՝ իր մտերմագոյն բարեկամին, իր իսկ բառերով՝ իր «սրտի հատոր» Գէորգ Չագրեանին:

Օշականի կեանքի վերջարտիսին գրուած այս նամակները արժէքաւոր են անով՝ որ անոր անձնական կեանքին ու առողջապահական դժուարութիւններուն առընթեր, կը շօշափեն նաեւ գրական ծրագիրներ եւ գրական գործունէութեան քառասնամեակի յոբելեանական հանդիսութիւններուն հետ առնչուած որոշ մանրամասնութիւններ:

Օշական եւ Չագրեան եղած են հին բարեկամներ: Չագրեան, իր պատրաստած Օշականի ընդարձակ կենսագրականի յառաջաբանին մէջ անդրադառնալով այդ կապին, կը գրէ. «Օշականը կը ճանչնամ իր մանկութենէն, պատանեկութիւնը՝ նախակրթարանի սեղաններու վրայէն, երիտասարդութիւնը՝ երբ ուսուցիչ էր իմ գիւղը Մարմարճը² ու իր գիւղը Մեօլեօ³. չափահասութիւնը՝ [1]915ի աղտէն առաջ ու վերջը, արտագաղթէ վերջն ալ երբ 1937ին կաթուածահար՝ իր հայրենակիցներու հրաւերով ամէն օր միասին եղանք երեք ամիս շարունակ, Փարիզի մէջ: Ուրեմն կէս դարու բարեկամութիւն մը, մտերմութիւն մը, եղբայրութիւն մը նոյնիսկ»⁴: Իսկ այլ առիթով կը հաստատէ, թէ՛ «Կը ճանչնայի Յ. Օշականը իր մանկութենէն՝ Պրուսայի նախակրթարանի գրասեղաններէն, ուր կը նստէինք քով քովի, երբ ես տասնմէկ, ան հազիւ տասնը երեքը լրացուցած էինք»⁵:

Օշական եւ Չագրեան դասընկերներ եղած են Պրուսայի մէջ 1897էն սկսեալ ու այդտեղէն ծնունդ առած է իրենց մտերմութիւնը: Ծանօթ է որ Օշական, երբ իր «Առաջին Արցունքը» գրութեան պատճառով կը հեռացուի իր գիւղի՝ Մէօլեօզի դպրոցի ուսուցիչի պաշտօնէն, Չագրեանն է որ կը համոզէ իր ազդեցիկ հայրն ու գիւղի քահանան, որ Օշական դասաւանդէ իրենց գիւղին մէջ ու կը յաջողի: Օշական երեք տարի, 1903-1906 կը պաշտօնավարէ անդ:

Նամակներուն հասցէատէրը՝ Գէորգ Չագրեան ծնած է Օշականի ծննդավայր Մէօլեօզէն ընդամէնը 12 քիլոմէթր հեռու գտնուող Մարմարճը գիւղը, 1885ին: Աւարտած է ծննդավայրի ու Մէօլեօզի Ազգային Վարժարանները: Աւարտած է Պրուսայի հայկական եւ Իտալիէ պետական վարժարանները, ինչպէս նաեւ տեղւոյն Շերամաբուծական Բարձրագոյն Վարժարանը: Ճամբորդած է Կովկաս՝ հաստատուելու միտումով, բայց Պոլիս վերադառնալով մնացած է այնտեղ 1908էն մինչեւ 1913: Նոյն տարիներուն ան վայելած է մտերմու-

Թիւնը Մեծարեանցի, Գեղամ Բարսեղեանի, Բժ. Տիգրան Գասապեանի, անոր տիկնոջ՝ բժշկուհի Օֆելիայի եւ այլոց:

Համաշխարհային Առաջին Պատերազմի օրերուն, գինուորագրուած ու դրկուած է Կելիպոլու, իբրեւ սպայ օսմանեան բանակին: Զինադադարին, գիւղ վերադառնալով, իմացած է՝ թէ Եղեռնին զոհուած են գրեթէ բոլոր հարազատները՝ մայրը, կինը, տղան, աղջիկը եւ վեց քոյրերը՝ իրենց ամուսիններով ու զաւակներով: Աւելի ետք, անցած է Զմիւռնիա, Ռումանիա, Գերմանիա եւ Յունաստան, ուր քանի մը տարի ծառայած է Կարմիր խաչին ու Նպաստամատոյցին: Դէպի Նիւ Եորք կարճ ուղեւորութենէ մը ետք, վերջնականապէս հաստատուած է Փարիզ ու կրկին ընտանիք կազմած:

Աշխատակցած է Փարիզի Յառաջին, Գահիրէի Յոսաբէրին եւ Պոսթոնի Հայրենիքներուն: Գրած է առաւելաբար «Երկիր»ի կեանքէն առնուած պատկերներ, ազգագրական բնոյթի պատումներ, ժողովրդական հեքիաթներու մշակումներ, յուշագրութիւններ եւն. («Թաղոս Աղբար», «Զատկի Պար», «Նոր Փեսան», «Կաղանդի Պատմութիւն»): Ունի նաեւ թղթակցութիւններ: Բաւական հարուստ նիւթ հաւաքած է Մէօլէօզի պատմութեան մասին:

Զագրեան բազմաթիւ առիթներով գրած է Օշականի մասին. 1947ի Մայիսի 17ին, յաջորդական 17 թիւերով, Յառաջի մէջ սկսած է տալ անոր մանրամասն կենսագրականը՝ «Յակոբ Օշական (Իր Յորեկեանին Առիթով)» խորագրով, որ արտատպուած է Յոսաբէր ամսագրի (1947) եւ այլ թերթերու կողմէ:

Աւելի ետք, կրկին անդրադարձած է Օշականի կեանքին ու գործին՝ «Յակոբ Օշական (Իր Կեանքն Ու Գրականութիւնը)» խորագրով յօդուածով, ուր տուած է 1901-1906ին՝ Մարմարճըքի մէջ ուսուցչութեան տարիներուն Օշականի գրած շարք մը արձակ ու չափածոյ անտիպ գրութիւնները եւ Օշականէն իրեն յղուած քանի մը նամակներ⁶:

Ունի գրութիւն մը՝ «Օշականին» խորագրով⁷, ինչպէս նաեւ այլ գրութիւն մը՝ «Նամակ Փարիզէն. Օշականի Յիշատակին Պանծացումը Փարիզի Մէջ» խորագրով⁸ եւ վերջապէս՝ «Գուշակ Տէրվիչը» վերնագրով գործ մը, որմէ հատուած մը արտատպուած է մասամբ Օշականի նուիրուած Բագիճի մէկ թիւին մէջ, ուր չէ յիշուած սակայն թէ ուրիշ՝ կատարուած է արտատպումը⁹:

Օշական եւ Զագրեան ունեցած են տասնամեակներու վրայ երկարող նամակագրական կապ: Մեզի ծանօթ Զագրեանին յղուած Օշականի առաջին նամակը կը կրէ 20 Հոկտեմբեր 1899 թուականը¹⁰: Իրենց նամակագրական կապին ակնարկելով, Զագրեան առիթով մը գրած է, թէ՛ «կը ստանայի իր նամակները տասնըհինգ օրը անգամ մը...»: Հակառակ փոխանակուած նամակներու այսքան մեծ թիւին, անոնցմէ ընդամէնը քանի մը հատ լոյսին եկած է ցարդ:

Զագրեան ասպարէզով եղած է առեւտրական:

Մահացած է Փարիզ, 21 Փետրուար 1956ին:

Հոս տրուող Օշականի նամակները հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց մեր կողմէ որեւէ միջամտութեան:

Ծանօթագրութիւններուն հետ կապուած որոշ ստուգումներու համար դիմած ենք Մարկ Նշանեանի կազմած Յակոբ Օշականի Մատենագիտութիւն հաստորին (Լոս Անճելըս, 1999):

Հրատարակուող նամակներուն բնագիրները կը գտնուին մեր մօտ:

Իմ սրտի հատոր Գեորգս,

Հիմա առի նամակդ: Տասը օրէ՛ն: Ուրեմն կրնանք ապրիլ, քանի որ քրթակցութիւնը այսքան դիրացած է: Այնքան շատ բաներ ըսեր ես ինձի թողթիդ մէջ: Ես ալ ունիմ այնքան շատ բաներ: Ուրեմն

ա)- Տողոր խնդիրը: Գրեցի արդէն Առաքելին: Եթէ երբեք այս տարին անցած նկատուի, գալ շրջանի համար անհրաժեշտ է որ տղաքը¹² ըլլան Բարիզ: Մտածեցէք ու ըստ այնմ առէք անհրաժեշտ քայլերը:

բ)- Յուզիչ է կոչդ առողջութեանս վրայ: Գիտեմ որ վտանգի հետ կը խաղամ, բայց մտքիս մէջ Նաբուգոդոնոսորի արձանին նման կանգուն է Պալզազը¹³ որ իմ հիւանդութիւնն ունէր: Մտիկ չըրաւ բժիշկներուն ու կ'ապրի այսօր: Ես կը տառապիմ ընելիքիս ահաւոր ընդարձակութեան պատկերին դիմաց: Կարդաս պիտի անշուշտ Համապատկերը¹⁴ ու պիտի զգաս թէ ինչ հզօր կիրք է այդ էջերը քշողը: Այ առողջութիւն, հանգիստ մարդու պէս ապրիլ իմ բառարանէն չնչուած բաներ են: Կան տակաւին Մնացորդագին¹⁵ տասը հատորները որոնք պիտի գրուին: Ու կայ տակաւին Իմ վէպը¹⁶ որ տպեալ քանի մը հազար էջ կը լեցնէ: Այս ահաւոր ճնշումին տակ օրերը կ'անցնին: Ժամ մը ժամուկէս միայն աշխատանք կը ներեմ իմ ուղեղին որ կը տքայ բեռին տակ ու ինձի կ'իմացնէ վտանգը: Մեղանս վերածուած է պտուղի, խոտի, ջուրի: Կեանքը իմ շուրջն է, տղոցս կերպարանքներուն վրայ: Անոնց ապրիլը ինձի կը բաւէ:

գ)- Յոբելեանին համար խանդավառութիւնը անհրաժեշտ էր. ուրախ եմ ստեղծելու վրայ ես գայն: Հոգ տար որ իմ հայրենակիցները մէկ ճակատով ներկայանան: Թող բոլորը համոզուին որ մեր գիւղը ազատուած է ընդմիշտ, որքան ատեն որ հայերէն գրող ու խօսող մը կայ, Մէօլեօզի Օշականին գործը կը խօսի այդ մարդուն: Ու այս գործը իրենք են¹⁷:

դ)- Չեմ միջամտեր քու կարգադրութիւններուդ. հոգ տար միայն որ Յոբելեանին շուրջը չգոյանայ ոչ մէկ պառակտում: Ազգային իշխանութիւնները, կուսակցութիւնները, գրական խմբակները պէտք է եղբայրանան իրարու, իրենցմէ վեր զգացումի մը մէջ որ ամբողջական գործն է Օշականին: Բարիզ ատոր երազը ապրեցանք իմ հայրենակիցներուս հետ: Այն ատեն դեռ կը պակսէր Համապատկերը: Դուն գիտես որ դէմ եմ եղեր Յոբելեաններուն. իմ զիջումը.- ահա քեզի արդարացումը: 7000 էջ¹⁸ ձեռագիրի բախտը կապուած է այդ զիջումին որ կրնայի չընել: Բայց գրելէ վ՞երջը: Ու դուն գոնէ գիտես թէ ինչ է զինը այդ թիսապարտութեան: Ուրեմն կը յայտարարես. ոչ իսկ սու¹⁹ մը Օշական կը զիջի ընդունիլ յոբելեանի գումարէն, գայն ամբողջութեամբ ըլլալով յատկացուած իր գործին տպագրութեան: Համապատկերին մէջ Միսաքեանին²⁰ վրայ տեղ մը դրուագ մը տուած եմ: Այդ մարդն ալ դիմած է ատենին ժողովուրդին որպէսզի օգնեն իրեն, իր գործը հրատարակելու: 150 ոսկի հանգանակած են ու տրամադրած: Դէպքերը այնպէս մը կը դասաւորուին որ գործը լոյս չի կրնար տեսնել: Միսաքեան այդ թուականէն վերջ տակաւին տասնեակ մը տարի կ'ապրի, ծանր գրկանքի մէջ, անօթի ու լքուած: Մահուան օրը մարդիկ կը գտնեն այդ 150 ոսկին աթոռի մը ոտքին կապուած ծրարի մը մէջ: Վսեմ ծերունին այնքան խորունկ կը զգար մեր բարեգործութեան զարհուրանքը:

ե) Չիս պահեցէք տեղեակ յոբելեանի գործունէութեան: Կը գրես որ ներկայացուցը cloud²¹ է կազմելու հանդիսանքին: Այդ մէկ օրուան մէջ ատիկա կարելի չէ: Կը մտածես որ հանդիսանքները ունենան երկու bien déterminé²² մասեր: Մէկը քիչ մը ակադեմական հանդիսանք: Ուր խօսէին Օշականին վրայ, իրենց գիտցածները: Չիս իբրեւ մարդ ներկայացնելու պարտքը պիտի իյնար վրադ²³, քանզի ոչ ոք կրնայ այդ դերը կատարել քեզի չափ ու պէս: Մի վախճան: Երբ ելլես բազմութեան առջեւ ու յիշատակներդ բանաս, Մարմար-ճրգէն... մինչեւ Բարիզ, արդէն կեանքին հետն ես ու մարդիկ մտիկ կ'ընեն: Ուրիշ մաս մը պէտք է յատկացուի Օշականի խաղերէն մէկուն բեմադրումին: Ես կը թելադրեմ կրկին Երկինքի ճամբովը²⁴: Չայն յարդարելը, բեմական ընելը շատ դիրքին: Տեսիր Շահխաթունին²⁵ ու յայտնէ իրեն իմ մտածումը: Երբ այդ խաղը վերածուի իր կշռին, այսինքն վերցուի իրմ գրական բաժինները ու ձգուի միայն տռաման, կ'ընէ անիկա ահաւոր տպաւորութիւն: Օշականը մէկ հարուածով հասած կ'ըլլայ իր ժողովուրդին: Ուրեմն յոյս ունիմ որ ամէնէն իրաւ Օշականը Բարիզը կը տեսնէ: Գաղութներուն մէջ բեմական այդ ուժերը չի կարելի ճարել: Քեզ տեսնեմ Գէորգ, երբ պէտք ըլլայ ես կը գրեմ Նշանեաններուն²⁶: Տիկին Սիրուի Նշանեանը չի կրնար մոռնալ իր ուսուցիչը, Բերայի Օշականը: Անգամ [մը] որ որոշումը կայացնէք ես կը գրեմ անհրաժեշտը Նշանեաններուն: Այսպէս թեթեցած, խաղը կ'ըլլայ յարթանակ մը: Ինծի պիտի պատասխանես կարելի եղածին չափ շուտ:

Ձ- Ահա քեզի տեղեկութիւններ

ա)- Կազմակերպուած է Հայէպը, լման երիտասարդութիւնը եւ ազգային իշխանութիւնները ծրագրած են փառատր բան մը ընել²⁷:

բ)- Պէյրութի մէջ կաթողիկոսը յանձն առած է յոբելեանի պատուոյ նախագահութիւնը²⁸:

գ)- Եգիպտոս պիտի տօնեն ազգային իշխանութենէն հովանաւորուած յոբելեան մը²⁹:

դ)- Կազմակերպուած է Կիպրոսը, շատ զօրաւոր կազմով մը³⁰:

ե)- Ամերիկայէն գիր առի որ պիտի կատարուի կարելի³¹:

Ահա առայժմ գիտցածներս: Պաղեստին պիտի տօնէ հաւանաբար Փետրվարին կամ զատիկէն վերջ: Իմ պաշտօնի ըլլալուս պատճառաւ էր որ ատելին չկրնամ գրել: Միւս կողմէն կը վախճան ալ: Անցած շաբթու մշակութային միութեան մը մէջ Ծառուկեանի³² Հէյ օջան Երեւանէն³³ տասնրիւնգ տող կը բացատրէի: Այնքան յուզուեցայ որ լման ունկնդիրները լացին, ամենէն առաջ անշուշտ ես: Ու դուն գիտնալու ես որ յուզումը թոյն է իմ հիւանդութեանս նոյնիսկ անարցունք ձեւին տակ: Կը կարծես թէ պէտք է ներկայանալ, իբրեւ հայ գրագէտ, այս ժողովուրդին, հանդէսի պահուն: Անցեալ տարի քիչ մնաց մեռնէի Ապրիլ 24ի սգահանդէսին երբ ելայ բեմ ու կանչեցի Վարուժանն ու Գեղամը, Չարդարեանն ու Չօհրապը³⁴: Հանդիսականները քար դարձան ու չէին կրնար զսպել իրենց արցունքները: Գիտես թէ ուր է դժուարութիւնը: Այդ հանդէսներուն մէջ ուրիշները չէ որ կ'ոգեկոչեն: Ու Օշականը կեցած է խօսքի, շուկայի մը պիտի մտածէր, քանի մը դրուշ փրցնելու համար... :

Է- Ծանր գործեր են թէ Սփիւքը³⁵, թէ Համապատկերը: Տիկին Սիրանը³⁶ կը գրէ թէ չէ կրցած կարդալ: Այո, գիտնալու է որ գիրքեր կան որոնք պէտք է վերջէն սկսուին: Քեզի որկածներս երկուքն ալ այդ տեսակ գիրքեր են: Համապատկերը պիտի սկսիս Օտեանէն³⁷: Սփիւքը գրուած է միայն ու միայն բա-

նաստեղծներուն համար: Ու տիկին Սիրանը պիտի գտնէ իր ուզածը եթէ սկսի Սփիւռքին վերջին գլուխէն որ կարծեն ցտեսութիւն վերնագիրը կը կրէ: Այն ատեն պիտի սիրէ իր հէմշէրին³⁸ որ շատ իրաւ բանաստեղծ մըն էր³⁹: Գուն ալ քալէ Սիրանին ճամբովը: Պիտի կարդաք Համապատկերը Օտեսնինէն վերջ, ...⁴⁰ մը պէս նետուելով Պատուելիին ուշքով: Ստացած են, բացառաբար տաք խօսքեր, Համապատկերին համար: Շատ պիտի ուզէի տարի մը առաջ տպուած եւ սպառած Հայ գրականութիւն⁴¹ հատորն ալ որկել: Բայց չունիմ: Սփիւռքը որկեցի թերթերուն ու բարեկամներուն որովհետեւ իմն էր: Համապատկերը վանքինն է: Պարտաւոր էի դրամով գնել ու որկել: Թող Լեւոնը⁴², Շաւարշը⁴³ ըլլան ներողամիտ: Բիւզանդիին⁴⁴ ալ կ'ըսես որ կը յարգեն իր կամքը:

Ը)- Այս ամսու կը սկսի տպագրուիլ Վկայութիւն մը⁴⁵ Ծառուկեանի Թողք առ Երեսանին իբրեւ յառաջաբան: Պիտի գործածեն ծախելու համար յոբելեանի օրերուն: Գրուած է տաք, խոր, իրաւ, կրքով ու մեծ յուզումով:

Թ)- Յունվարին թերեւս աւարտեն Ապուլ Ալան⁴⁶ արար բանաստեղծութեան վրայ ուսումնասիրութիւն մը գոր սկսայ պաշտօնական մարմնէ մը առած հրաւերովս: Իրաւ գործ մըն է, Սփիւռքին կրկինը ծաւալով: Վկայութիւնն ալ Սփիւռքէն աւելի է արդէն: Կը տեսնես որ կեցած չունիմ: Ամէն շաբթու կը հասնին գիրքեր: Պարտաւոր են գրել իմ տպաւորութիւնները, ընել թելադրանքներ: Կը մեղքնաս: Ու առ ալ ուրիշ սպառում: Գրելը - նամակ թէ Համապատկեր - նոյնն է ինծի համար. ժամանակի հարց մը: Ու տակաւին կը սպասեն Մնացորդագր: Իմ վէպը, խաղերը:

Ժ)- Պզտիկը կը մեծնայ⁴⁷: Տասը տարեկան եղաւ: Վահէն շքեղ երիտասարդ: Կը գրէ, կը խօսի (անցած շաբթու ներկայացուցեր է շորթ էեզոթիին, ու մարդիկ հիացումով հետեւեր են իր խօսքին) ու ելքերական ֆապրիզին մէջ կ'աշխատի լաւ մեքանիստեան մը ըլլալու: Իր վաստակը եւ իմը տունը կ'ապրեցնեն: Անահիտը⁴⁸ վարիչն է անգլիական մեծ հաստատութեան մը (Պըրրօթիշ Գաունսալ կոչուած որ անգլիական մշակոյթին պրոպականդը կ'ընէ Սիջին Արեւելքի մէջ), յարգուած ու կարող տիկին մը: Արաքսին⁴⁹ մտած է, կամ մտնելու վրայ [է] գերութեան շրջանը:

Ու, Գէորգ, կեանքն է որ անցած է հոլովներէս:

Հիմակու հիմա ցտեսութիւն:

Նայէ որ ներկայացման հարցին համար արագ շարժիք:

Սիրով
Օշական

Բ.

1947 Յունվար 1
Երուսաղէմ

Սիրելի Գէորգ,

Տարիին առաջին օրն է: Առաջին ալ նամակս կը բանամ քեզմով: 26ի նամակդ առի 5 օրէն: Ինչպէս միշտ, այս անգամ ալ անիկա լեցուն է շահեկան հարցերով: Ըստ սովորութեանս, կը բաժնեն զանոնք, կարելի եղածին չափ յստակ պատասխանել կրնալու համար:

Ա)- Գրողներու միութեան նամակը⁵⁰: Կասկած չունիմ թէ մեծ մասը, այդ միութիւնը կազմող գրողներուն հակառակ է ինծի... ջրհեղեղէն: Հետեւաբար

ես տուեր եմ իրենց այդ իրաւունքը: Թերեւս միամտութիւն՝ նման տրամադրութեանը տողորում միտքերէ սպասել հոգեկան ազնուութիւն: Բայց կը խորհիմք թէ մարդկայինին զգայարանը մեր մէջ կրնայ նուազիլ, քիչ՝ անգամ մեռնիլ: Կատարումը անորակելի խարդախութիւն մըն է, խաբեբայութիւն մը: Բարիզի գրողները պարզ Վկայութիւնը կարդալով պիտի զգան ատիկա: Այն ատեն պիտի հանդուրժե՞ն որ Սուրիոյ բոպիկ լրագրողներու սարքած քապար⁵¹ իրենք ալ ըլլան ստիպում վաւերացնելու: Այս կէտն է որ պարտաւոր են լրջութեանը նկատի առնել: Տրէյֆիսի⁵² քաղաքը պատմական է արդարութեան, մարդկութեան զգայարանը: Իմ դիմումը ստուերներու դիմում մը չէ: Իմ ամենէն կատաղի հակառակորդներս առնուազն մարդեր են: Հրաչին⁵³ կը կարդաս այս տողերը ու դարձեալ զինքը կը հրաւիրես մարդկութեան: Յետոյ, յստակ հասկցուր բոլորին, հայրենի առածը որ կ'ըսէ «սատկած էշը գայլէն չի վախնար»: Գրեր եմ Ամերիկայի, Եգիպտոսի ռամկավար բարեկամներու որոնք օրակարգին հետեւելու պարտքը նախընտրեցին իրենց խղճին ձայնէն թէ արմիր պօմպով ալ յարձակէին վրաս, դարձեալ կը պահեն իմ վճիռները աննահանջ, երբ հարցը կը պատկանի գրականութեան: Աշխարհի մէջ ուժ չեն գտներ զիս շեղելու ընդունակ իմ համոզումներէն: Հոն ուր արժէք կայ, ես ոչ ոքէ հրահանգ, հրաւեր կը սպասեմ: Մէջտեղն է գրական իմ բովանդակ անցեալը:

Բ)- Սիոնէն արտատպումը Արեւմուտքի մէջ⁵⁴: Պարագան կը կրկնէ Ծանուկեանի եղանակը: Ան ալ Վկայութիւն մըն հատում մը հրամցուց Նայիրի մէջ⁵⁵, փոթորիկը ստեղծող: Ու ընտրում հատումը կը ներկայանար ինքնագլուխ: Սիոնի մէջ կտորը Արեւմուտքի մէջ արտատպումին առնուազն տասնը հինգ անգամն է, Օրն Օրերուն⁵⁶ վերջին պատկերը, Պատգամ վերնագրում⁵⁷ ուր Լուսատիչ իր ժողովուրդը կը հրաւիրէ արդարութեան, եղբայրութեան, ազատութեան, մոռնալու մեր պատմութեան մեծ չարիքը, անմիտութիւնը ու խանդավառուելու հայ հայրենիքին հաստատ իրողութեան մէջ: Եթէ Արեւմուտքին արտատպումը գետեղուի ամբողջութեան մէջ, միտք պղտորող զգացումը երբեք չի ծագիր: Հէյ, Գէորգ, տղաս: Օշականը մանուկ չէ: 1944 ին երբ կաթողիկոսի կողմէ պատուիրակներ եկան, յայտարարեցին թէ Օշական դատապարտումը դաշնակ մըն է Երեւանի աչքին ու անուղղակի ինծի հաղորդեցին որ ոչ մէկ բան կրնայ փոխել այդ վճիռը: Ու ես ծանօթ եմ պետական քէներուն որոնք ամենէն անողորքը կ'ըլլան, վասնզի անձէն ալ վեր են: Այսպէս ըլլալէ, դասաւորուել վերջ, մանկամտութիւն պիտի ըլլար Երեւանը դարպասել: Բայց անխելքութիւն, անմարդկութիւն՝ ինծի հանդէպ առնում այդ վճիռին պատճառով՝ անտեսել իմ ժողովուրդին իրական բարիքը: Կը հաւատամ թէ քառորդ դար վերջը Ֆրանսայի հայութեանն ոչ մէկ հայ կ'ապրի ձուլումէն: Ու ասիկա այսպէս՝ սփիւռքին համար ալ: Ազատումը կարելի է միայն ու միայն Հայաստանով: Ու ով որ անկէ դուրս է, դատապարտում է անարգ մահուան, իր ժողովուրդին համար: Ահա ամբողջ տռաման: Ու ասոր կը հետեւի միւս գայրոյթը: Այսքան յստակ այս վճիռէն վերջ, ինչպէս կ'ըլլայ որ Հայաստանի մարդերը, գաղութներու աքլորները չեն ծալլեր, ըներ հետի գերութեան մագաղաթները ու երեսբայ չեն ողջագուրեր զիրար, հայրենիքին երջանկութեան մէջ: Ահա տիրական զգացումը: Օրն օրերուն ը գրում է փոթորիկէն առաջ. ապրիլի նահատակներուն հանդէսի մը համար: Կը բաղկանայ չորս պատկերէ: Կոթողի մը շուրջ դասական choeur⁵⁸ արեան

տռամային որ Միւնեցիին⁵⁹ թեքնիքովը կը պարզէ ապրիլեան նահատակութիւնը, ոգեկոչելով մեռելները: Ու կուգան մեռելները լսելու համար ողջերը: Մեռելներն են ապրիլեան մտաւորականները, շատ թափանցիկ՝ Վարուժանը, Չօհրապը, Տաղաւարեանը, որոնք կը խօսին մեր ժողովուրդին յաւիտենական հաւատքէն: Կը յայտնեն թէ իրենք երբեք չեն մեռած: Իրենց արիւնն է որ ստեղծած է... Երեսանը, արդի Հայաստանին փառքը: Ոչ մէկ դաշնակ, հնչակ, ռամկավար ակնարկութիւն: Լուսաւորիչը երկինքէն կը կանչուի մեծ հոգեհանգիստի մը: Ու կը կարդայ իր պատգամը որ կը փակէ խորհուրդը: Ահա նիւթը: Անգթութիւն անգթութեանց՝ ատոր ետեւէն ալ դաշնակը գտած ըլլալ յաւակնիլ: Ու կանխադան բարձրանալ ինծի համար աւելի դիւրին է քան այդ համահայկական զգացումը մենաշնորհի վերածել սա ու ան կուսակցութեան: Հայութիւնն է խորհուրդին տիրական մոթիֆը: Ու այսքան: Կ'ըսես վրդովեալներուն որ Օշական չի կրնար նահանջել, վասնզի իր երկերուն եւ արարքներուն մէջ ուզած է միայն մէկ բան ու ատիկա իր ժողովուրդին ազատութիւնն է: Գիրքը ընդհատուեցաւ որովհետեւ մեր տպարանը հիմա օրացոյց կը տպէ ու գրաշարը բռնուած է այդ գործերով:

Գ)- Լ.Չ. ի⁶⁰ գիրքը կարդացի, գրեցի ալ իրեն, խնդրելով որ իրեն պահէ: Խորքը սա է նամակիս: Ըրած է յանդուգն բան մը ու իր հին ընկերները հանած է իրեն դէմ⁶¹: Բայց անցած է աւելի անդին, իր նոր ընկերներն ալ իրեն հանդէպ զինելով, վասնզի Օշականին ճակատագիրը կը տեսնեմ իր մօտ: Պիտի ենթարկուի յարձակման համայնավարներէն որոնք երբեք չեն հանդուրժեր քննադատութիւն: Գիրքը կարդացի, թէն ծայրէ ի ծայր խնդրական, քանի որ հարցերը որոնց մօտեցած է, դեռ չեն հանգչած: Գրեցի իրեն որ սխալ էր 1915ը վերագրել կուսակցական անպատրաստութեան: Յիշեցուցի թէ 1922ին յոյները դաշնակ չունէին, 1925 քիւրտերը դաշնակ չունէին ու... բնաջնջուեցան: Իրեն կը հասկցնես իմ խնդրանքը իմ նամակը չօգտագործելու:

դ)- Արեւմուտքը ինչպէ՞ս պիտի յաջողին իրաւ օրկանի մը վերածել:- Ահա ինծի մտահոգութիւն տուող հարցը: Մեսրոպը⁶² քաղաքական ջիղ ունեցող գրիչ մըն է: Բօլաշու⁶³ գրական: Հ. Պէրպլեթեանը⁶⁴ զբօսաշրջիկ որմէ ոչինչ կրնայ մնայուն դուրս գալ, հակառակ իր մեծ պատրաստութեան, վասնզի ինք ամբարտաւանութեամբ մը վիրատու էր տակաւին... Պօլսէն: Ուր հակառակ էր ինծի. առանց զիտնալու ինչո՞ւ: Հայաստանեան ճակատէն ոչ մէկ գրող կրնայ իրեն նպաստ բերել: Սարաֆեանական⁶⁵ վերլուծումները շատ քիչերուն կը հասնին: Հանդէս մը պատահականութեամբ չի կրնար քալել: Որոնք են իր *gagne*⁶⁶ աշխատակիցները: Ի՞նչ է այդ Կիլիկեան միութեան ծրագիրը: Պիտի կրնա՞յ հայրենիքին եւ սփիւռքին մէջ կապի դեր մը փառասիրել. փարատելու համար Երեսանի մէջ տիրող հակասական զգացումները սփիւռքին: Կ'ընդունին որ ոչ մէկ դաշնակ գրագէտ չէ հակառակ ներգաղթին: Այս ճշմարտութիւնը պիտի յաջողի՞ հասկցնել Երեսանի մարդոց: Ահա դեր մը որուն համար մենք կ'ըլլայինք երախտապարտ:

Կը գրեմ այս ամէնը անտեղեակ կացութեան: Կը զգամ որ սերունդ մը պարտաւոր է կռնակ կենալ այդ թերթին: Կ'ընդունին որ որոշ խառնուածքով երիտասարդութիւն մը կայ: Արեւմուտքը - Հայաստանի համար պարզ ճակատով մը, սփիւռքը անոր տանելու- հաստատ առաջադրութեամբ մը կը յաջողի: Բայց այս պարզ կարծուող ուղղութիւնը այնքան բարդ է երբ ձեռնարկեն գործադրել, որ մեծ նկարագիր, լայն զարգացում, արդարի սիրտ է հարկաւոր: Իմ

մասիս դժուար թէ յաջողիմ օգտակար ըլլալ իրենց: Իմ գրականութիւնը ծանր կու գայ հանդէսին: Բայց տրուած ըլլալով իրենց բարի-կամեցողութիւնը հանդէպ ինձի, կ'աշխատիմ գոհացնել զիրենք: Իրենց ուզածը չէ որ պիտի տամ: Բայց պիտի տամ ինչ որ այս ժողովուրդին մեծ գրականութիւնը կ'ուզէ: Կը բարեւես զիրենք: Ու կը յայտնես իմ տրամադրութիւնը: Հայաստանի գրականութիւնը քննադատելու ատենը չէ հիմա:

Ե)- Լեւոն Շիրինի խնդիր: Ահա Լեւոնին ձեռքով ինձի դրկուած հաշուեցոյցին պատճէնը:

2800 ութ պրակիւն արժէքը
81,90 - չէ նշանակած թէ ինչ ծախք է
93, - չէ նշանակած թէ ինչ ծախք է

2974,90

հիմնադրամ 1000

1974,90 կը մնայ իր պահանջը

չզանձուած զանձուած

դրկած է 17 թերթերու
10 Օշականին 150
30 Թաշեանին⁶⁷ 435
16 Վ. Թաթուլ⁶⁸
85 Գ. Չաքրեանին 275 1000
5 Հրանդ Սամու[է]լի⁶⁹ 75
2 Բալուեան⁷⁰ 30

165 օրինակ Սիւնեցի 1465

Արդ ընդհանուր պարտքէն հանելով 1465ը կ'ունենանք 509,90: Ասդին ունինք զիրքերուն սքոքը: Ատենն է որ Շիրինը այս գիրքերը նետէ հրապարակ ու անոնց փոխարժէքը իր անունով յանձնէ յորելեանի ֆոնտին: Եթէ պէտք է որ իրեն գրեմ ասոնք, թելադրէ ինձի, հասցէն ալ տալով:

2)- Շատ կը խնդրեմ որ տղաքը ունենաս նկատի: Տան տղաներ են: Երկուքին ալ վրայ կը հանգչի երկու տունի գերագոյն յոյսը: Ըսի՞ թէ Անահիտը հերոսական քաղցրութեամբ մը, իր փափուկ վիճակին մէջ, յօժարած է անկարելի գոհողութեան, թէ Օշական այս քար հոգիին մէջ յօժարած է առանց իր տղուն իր աչքերը զոցել սա աշխարհին: Ասոնք գիտնալէ վերջ երկուքն ալ կը մեծման իրենք իրենց աչքին ու իմ ամէնէն մօտ ընկերը ի վիճակի է մօտէն հարողը ընելու զանոնք իրենց ճակատագրական դերին:

Սիրով
Յ. Օշական

Տիրանը⁷¹ եւ Վահէն կը գրեն ձեր տունէն շատ գողտր յուզումով:

Միրելի Գեորգ,

Գարերով կարծես սպասուած նամակդ առի վերջապէս: Ապրիլ 1 ին էիր ձգած: 12 ով Վահէն արդէն ինծի կը խօսէր կոկորդէդ: Հիմա չեմ գիտեր թէ ինչի յանգած է կացութիւնը: Վահէն պաշտօն ունի շաբաթը երկու անգամ զիս տեղեակ պահելու վիճակէդ: Յամառ aphasie⁷³ ներուն վրայ իմ գիտցածը անբաւական է: Այն պարագային որ դանակի տակ պիտի ըլլաս երթալու ստիպուած, պարտաւոր ես մտածել: Չեմ խորացներ իմ արդէն ծով ցաւին շուրջ սա նոր տռաման: Ես մահուան մէջ կ'ապրիմ ահա տասը տարիէ ի վեր: Ու աւելորդ է մեր օրինակները աճեցնել ուրիշներու ցաւը դատելու ատեն:

Չգրեցի, սարսափին տակը յոբելեանին որմէ յոգնած եմ, տակաւին պատառ մը բան չապրած: Քու տեղեկութիւններդ կը բաւեն ինծի: Ըսելիքներս անսպառ, բայց նոյնքան անօգուտ: Օշականին յոբելեանը ինքնին բարդ, դիւրաբեկ կառոյց, չդիմացաւ մեր լրագրութեան մէջ փորձուած ամէնէն ընդարձակ գրոհին զոն երթալով: Իմ հակառակորդներուն ուրախութիւնը չեմ աճեցներ սակայն: 1922 ին գրոհը նոյնն էր⁷⁴: Այն ատեն Օշական երիտասարդ էր ու կրցաւ անցընել վտանգը: Հիմա, դարձեալ Օշականին անձը չի վախճար, բայց իր գործը մնացած է հանրութեան գութին: Սկսած եմ կատարել անջատ դիմումներ, անհատներու, Համապատկերէն հատորներ կնքահայրելու համար: Դեռ չեմ յուսահատ: Այն օրէն որ յոյսս կործանի պիտի նետեմ կրակը ու անցնին առաջին հատորները: Այս ժողովուրդը չարժեր աւելին:

Բազմաթիւ հարցեր կը շօշափես:

Ա)- Վահէն, որուն վրայ դիտած prime-sentier⁷⁵ այդ հանգամանքը իմ ալ տառապանքը կազմած էր: Կը յամառէր ու կը հաւատայ իր ապրումներուն արժէքին: Այդ ինքնութիւնը, իր տղուն վրայ, հօր մը համար սիրելի, բայց տղուն ասպարէզին համար կրնայ վտանգներ ստեղծել: Ատիկա չկրցաւ հասկնալ: Կը յիշե՞ս, որքան արդարադատ մէկն էի: Գեղին բոլոր հարուստ երիտասարդները, վէճի մը ատեն կը դիմէին իմ վճիռին որ կը մնար արդարը (եթէ յոբելեանի առթիւ խօսքիդ մէջ տեղ մը տաս այս գիծին, շատ բան լուսաւորած կ'ըլլաս իմ ճակատագրէն ու նկարագրէն): Տղան ալ նոյնը: Մեղմութեամբ, քաբքով, ջանացէք զինքը ընել աւելի ճկուն: Արամը իր նամակներուն մէջ հօրը կը հակադրէ տղան, նոյն գետինին վրայ: Դուն կը գրես իրականը հաւանաբար: Ամէն պարագայի հանրային մարդու գերագոյն արժէքը ճկունութիւնն է: Վահէն շնորհներ ունի: Պիտի չուզէի որ ատոնք անօգուտ դարձնէր հօրը նկարագրին կրկնութիւնովը իր վրայէն: Կը հաստատեմ միւս կողմէն որ շատ կը ծախսէ: Բայց ինք է վաստկած: Կը գրեմ իրեն որպէսզի պահէ արդար չափ մը ծախսէ: Չարմանալի բան մը գրած էիր, քու ծախսերուդ մասին: 800-900 ֆրանքի ամսական ծախս մը նշանակած էիր քու տունիդ ու կ'աւելցընէիր որ գրկանքի մէջ չես: Վահէին 14 000 ին մօտ, երկու հոգիի ամսական 1000ի իսկ չհասնող ծախսը մտքիս մէջ շփոթութիւն է ստեղծած: Էրիկ կնիկ Անահիտ խորհեցանք որ մէյմէկ գերօ կը պակսէր թիւերուդ մէջ, մոռացման արդիւնք հաւանաբար: Սրբագրեցիք ու տարին 8000-9000, ինչ որ շատ տրամաբանա-

կան գումար մըն է, քանի որ ինքդ ալ արդէն 4-5 հոգինոց ընտանիքի մը համար ամսական 24 000 ֆրանք պիտոճէ կը նախագծես: Բարի եղիր զիս լուսաբանել: Եթէ իրաւ է որ ամիսը 1000 ով կ'ապրիք երկուքդ, այս տարի իսկ կու գամ Բարիդ: Բայց չեմ սպասեր:

Բ)- Իմ հոտ գալու հարցը ունի գործնական երեսներ: Կը հաւատամ թէ Վահէին ծախսածին վրայ քանի մը հազարի ալ յաւելումով տունը լման կ'ապրի: Բայց ատկէ առաջ կան նկատի առնուելիք կէտեր: Նախ Համապատկերին ճակատագիրը: Վանքը⁷⁶ երբ կը ձգեմ, զիրքը կը մեռնի ինքնաբերաբար: Չայն լոյսին արժանցընելու կարելիութիւնները կապուած են իմ հոս մնալու: Խորհեցայ պահ մը մայրը եւ Կարօն դրկել: Ես հոս վանքը կամ Անահիտին քով: Բայց հիւանդութիւնը կրնայ յանկարծ գալ: Այն ատեն Արաքսը մահուան դէմ միակ պաշտպանը ունիմ: 1942ին երկրորդ կաթուածը առանց Արաքսի տարած կ'ըլլար զիս: 4 ամիս անկողինէն վար չդրի ոտքս: Ու հոն էր Արաքսը: Ինչպէս կը տեսնես, հարցը հարց մըն է մահուան ու կեանքի: Ուրիշ պարագայ՝ ապրուստը: Գիրք ծախելով կ'ապրին խաչագողները: Չունիմ ոչ մէկ բարեկամ որ սանկ ու նանկ հազար մը կ'ըրցընէր: Միակ ճամբան ֆրանսերէն գրելը պիտի ըլլայ: Ու Արամին յայտնութիւնը Ֆրանսայի գրողները մեր վարժապետներէն գէշ կ'ապրին: Իմ խնայողութիւններս կ'ըրցընէր, ծախուելիք կարասիները ծախելով, միմակ անկողինները պահելով թերեւս գտնէ 4 - 500,000 ձեր ֆրանքը: Այս գումարով արուարձաններու մէջ 3-4 սենեակնոց տնակ մը կարելի՞ է: Աս է էականը: Եթէ այո, տուր ինծի մանրամասն տեղեկութիւն, Տիրանին միջոցով որպէսզի երբ դառնալէն վերջ նորէն երթայ Ֆրանսա, այդ գումարը հասցընէ Բարիդ: Անհրաժեշտը մինչեւ իմ մահը իմ ընտանիքին ապրելու կարողութիւնն է: Վահէին դրամը գատ: Մահս կը բերէ տունին 500 սթերլին: Այնպէս որ մահէս վերջը չունիմ մտահոգուելիք: Ահա եղերական նամակ մը:

Գ)- Գոհ եմ որ յոբելեանին չի խօսիր Պարսամեանը⁷⁷: Նախ իր հոգեկան պզտիկութիւնը խնայած կ'ըլլայ ինծի: Երկրորդ՝ իր խօսքին ստեղծելիք տրտմութիւնը: Յիշելու ես անշուշտ որ 10 տարի առաջ ինչպէս թափփփեց բերնէն Օշականը ներկայացնելու ատեն: Բարիզը իր Գրողներու Միութիւնով ամենէն néfaste⁷⁸ տպաւորութիւնը կ'ընէ վրաս: Ու գոհ եմ որ ընդդէմ անոր կը սարքէք յոբելեանը: Բարիդ եղած օրերուս ես զգացի թէ այդ տեղի հայ ժողովուրդը չէր կրնար գրականութիւն մը ապրեցնել: Կեանքը-իմացականը-ապաստանած էր կուսակցական կիրքերուն ետին: Ու զանգուածը արագաքայլ կը հեռանար իր պապերէն: Սէօլէօզցիներուն տղաքն իսկ կը հերքէին իրենց հայրերը: Ահա թէ ինչու այդ ժողովը դատապարտուած է քանի մը արքայի գլուխ կրելու: Ոչ մէկը, այդ ժողովէն ինքզինքը ըլլալու ատենը, մանաւանդ տրամադրութիւնը չունի: Ամէնքն ալ կ'ապրին իրենց պզտիկ փառասիրութիւնները ու ճամարտակութիւնները: Օշական մը այդ գորտերու ժողովին մէջ անհեթեթ անասուն մը պիտի ըլլար:

Դ)- Գրած եմ ինչ որ բան, Վահէին նամակին մէջ, յոբելեանին օրը խօսուելու համար, իմ բերանէն: Անոր սկիզբը ունիմ ցաւի արտայայտութիւն մը որ այդ խօսքը քեզի չի վիճակուիիր (գրեցի ձայնիդ ակնարկելով, եթէ երբեք ձայնդ ինքզինքը գտաւ ու դուն կրցար ելլել բեմ, այն ատեն կը կատարես այդ տողերուն վրայ անհրաժեշտ սրբագրութիւնը)⁷⁹: Հիմա, անելի լուրջը: Չեմ յիշած ոչ մէկ անուն-յանձնաժողով, բանախօս, երգող, արտասանող, որոնք իրենց

բաժինը կը սպասեն շնորհակալութեան: Հալէպ, առանց անուն տալու, բեմէն քանի մը խօսք ըրի, բայց Երուսաղէմիին գրեցի քաղաքական ժողովին, առաջնորդին, յորելեանի յանձնաժողովին իմ խօսքը: Նո՞յնը պիտի ըլլայ հոտ, թէ տեղին վրայ, նոյն հանդէսին իսկ մէկը, իմ կողմէ արսօնուած մէկը, իմ անունով ի պաշտօնէ պիտի յայտնէ իմ շնորհակալութիւնը, յակահնէ յանուանէ յիշելով բոլոր աշխատատեղերը. եթէ ոչ պիտի գոհացուի en gros⁸⁰ յիշատակութեամբ մը: Այս հարցերը, տեղին վրայ լուծուելիք հարցեր են: Չիս կը պահես տեղեակ: Ի վերջոյ սրտագին բան մը կայ սա ելոյթին մէջ, հալածուած գրագէտին տէր կանգնելու: Ու ասիկա յուզիչ է:

Ե)- Իմ առողջութիւնս: Չմեռը տկարացայ: Անժին տ'էֆօռը⁸¹ գլուխը ցոյց տուաւ: Պառկեցայ մէկ ամիս: Անժինը չվերածուեցաւ աքաքի, գրիզի⁸², բայց չեմ դարձեր նախորդ վիճակիս: Ահա պալանսը: Մեծ պահքը աշխատեցայ արդիւնքը փայլուն էր: Ամսուան մը մէջ հարիւր էջի մօտ բան դուրս եկաւ, Համապատկերին ծաւալով: Չորս ծաւալուն կտորներ: Երկուքը դրկեցի Բարիզ, մէկը Գահիթէ, միւսը Սիրանիս⁸³: Արեւմուտքին մէջ լոյս տեսածը ամէնէն ուժգինն էր: Չորս օրէն նետեցի գիրքը, առանց գիրք մը բանալու Պալգագէն կամ անոր վրայ խօսող բանակէն⁸⁴: «Այնքան այդ միտքը զիս կը խռովէր»: Վերստին գրել մը զայն կը վերածէր 300 էջնոց հատորի մը: Ու դուն զիտես որ ինչ եղերական տագնապ է ինձի համար ժամանակի տագնապը: Եթէ Սիռն չես տեսներ, գրէ որ դրկեմ. Սիռնի 18 էջը բռնած է արեւելահայ բանասիրութեան վրայ ուսումնասիրութիւնս⁸⁵ ուր իմ սիրական քեման մշակած եմ, արեւելահայ բանասիրութեան գերագանցութիւնը մխիթարեանին եւ արեւմտահայերու ըրածին վրայ: Չեմ կարծեր որ այդ յօդուածն ալ հակառակէն անդրադարձումներ ստեղծէ: Ատոր լայք-մոքիֆը⁸⁶ քսան տարիէ ի վեր գրեր եմ, զանազան առիթներով, զլիատարաբար Բալուեանի Չուարքնոցներուն մէջ⁸⁷: Վկայութեան մէջ ալ շատ յստակ է իմ հիացումը այդ ճիգին վրայ Խորհրդային Հայաստանին:

Չ)- Օրն Օրերունը դրկած եմ Վահէին: Գրուած է Մարտին, 1946, այսինքն գրողէն առաջ: Ու կ'արտայայտէ իմ հոգիին գերագոյն յանձնառութիւնը, ան՝ որ թելադրած է ինձի իմ երագը, աշխատանքը, անսպառ իմ հաւատքը իմ ժողովուրդէն որ բարեբախտաբար լրագրողներէ չէ կազմուած: Ատիկա իմ ժողովուրդին ամփոփուիլն է իր հողերուն վրայ: Ոճիր է, որու կողմէն որ գայ, եւ որ պատրուակով ալ գայ, վիճակ մը, որուն արդիւնքը հայու մը պակասը պիտի ըլլար հայրենիքէն: Սքանչելի այս խանդավառութիւնը ինչ անիմաստ, անմարդկային, պատեպատ միջոցներով կ'ուզեն սպաննել ստեղծելով անբոլոր շահատակութիւնը հրաժարականներու, հաւատարմութեանց: Հիմա, հակահարուածը: Հայաստանէն սպրդող գէշ լուրերը կը շահագործեն ու վտանգի կ'ենթարկեն մեր հաւատքը: Տեղն է ըսել որ դաշնակները այդ գետնին վրայ եղան արժանի իրենց մեծ պետերուն մեծութեան: Մեռելները չունին քաւելիք: Քաղաքական կացութեան վերջին կերպարանքը այլեւս առանց քօղի մեր առջեւն է: Ռուսերը չեմ կարծեր որ փորձեն պատերազմը, երբ արդէն աւերուած է իրենց երկիրը: Ու մեր անուշիկ բախտէն թուրքը կը մնայ տէր մեր հողերուն: Այս իրողութիւնը աղետալի կերպով պիտի անդրադառնայ մեր զանգուածին: Բայց Լոզան⁸⁸ մը չկործանեց մեր հաւատքը: 1950ի [այսպէս] հաշտութիւնն ալ, որ մեր երկիրը թուրքին կը սեպակակնացնէ, աշխատեցէք որ չըստեղծէ անտեղի խուճապ: Անսասան է իմ հաւատքը գալիքին: Հարուստի - աղքատի

տռաման չի կրնար չլուծուիլ: Ու հարուստ ազգերու այսօրուան յաակնութիւնները չեն կրնար չսմբիլ: Եթէ ռուսերը անբաւական կու գան, այդ ոճիրները մաքրելու, հեռու չէ օրը երբ իրենք ժողովուրդները (արեւմուտքի) պիտի ծառանան այս գերագանց անարդարութեան դէմ:

Է)- Աւելորդ է ըսել թէ որքան տագնապով կը սպասեն նամակիդ: Առողջութեանդ շուրջը հիմնական ու յստակ կ'ուզեն որ ըլլաս ինծի գիրիդ մէջ: Եթէ պէտք կայ որ ենթարկուիս գործողութեան, մի վարանիր, որքան կանուխ, այնքան լաւ: Արդէն սխալ ես ըրած ամառուան սպասելով: Իմ առողջութիւնը կը նահանջէ, բայց գիտեմ որ քանի մը ամիսներու միակտոր, բացարձակ հանգիստ մը կ'անցնի իր արիւնքի⁸⁹, տարիներու վերածուած: Մօտ է արձակուրդը: Պիտի յատկացնեն բացարձակ դադարի: Ու հանգետօրէն ու տրտմութեամբ կը խորհիմ որ պատերազմը արգելք եղաւ Անահիտին⁹⁰ ու Վահէին ուսումներուն: Հիմա, եթէ ունենայի տղաս ինծի գորավիզ, կը քաշուէի դասէն ու կը գրէի: Յարդ, երկու ճակատը յաղթահարեցի: Բայց կը դիտեմ որ Կիրակի օրերը աւելի հանգիստ են, արդիւնք՝ դասի չգոյութեան: Թէեւ օրական երկու պահ է դասս, բայց ինծի կ'արժէ չորս հինգ ժամու սպառում, քանի որ պահը լման կ'ընեն ինձմով: Այսինքն միակտոր խօսիլ, երկու ժամ: Տղան, դրամը մարդուն պէտք են հիւանդութեան համար:

Ը)- Սկսած են, գիտես, Վէպը: Չորս մասերով: Չեն գիտեր, ինչ պիտի ըլլայ ծաւալը իրաքանչիւրին: Բայց կը խորհիմ թէ էն քիչը հազարական էջ պիտի յատկացնեն Մանկութեան, Երիտասարդութեան, Չափահասութեան, Ալեւույթին: Այս մասերուն ետեւ կեանքը, գոր սպրեցանք: Թէեւ autobiographique⁹¹, բայց գերագանցօրէն վաւերագրական նկարագիր մը պիտի ընդգրկէ գործը: Եւ որովհետեւ խառնուած են իմ ժողովուրդի կեանքին ծանրագոյն կորուստներուն, դժուարութեան մէջ չեն նուաճելու - իմ ժամանակը: Ու չգրուած, տագնապը՝ տպագրութեան: Մնացորդագ, Համապատկեր նոյն մտայնութեան մէջ ծնած են: Գուրգէնը⁹² յաջողուց գէթ Մնացորդագ-ին կէսին լոյս ընծայումը: Կցկտոր ձեւով գուցէ Համապատկերին ալ 5-6 հատոր յաջողիմք տալ: Բայց նոր վէպին ճակատագիրը կը մնայ բոլորէն սեւ: Ինչ արած: Աշխատիլ ու մոռնալ: Չմտածել: Որքան կ'սպրիմ, չեն գիտեր: Եթէ երբեք յաջողուեցաւ ինծի նուաճել երեք մասերը, չորրորդը կրնայ վերջանալ տողով մը, ուր որ ալ ըլլայ հասած գործողութիւնը ու այդ տողն է ըլլալու «Այս վէպը կը վերջանայ սա տողով» գոր բարեկամ մը արտօնուած է աւելցնելու ձեռագրին վերջին տողին: Գրուածքը, այդ յաւելումով կը գտնէ իր միութիւնը, ամբողջութիւնը:

Թ)- Բարիգի կեանքին - ծախքերու դրութեան - մասին տեղեկութիւնները քելադրէ Վահէին: Տիրանն ալ պիտի բերէ հարկաւ մանրամասնութիւն: Թոռնիկս պուպրիկ մըն է⁹³: Դիշդ ալ ժամանակին հասաւ: Լուսահոգի մայրս կը պատմէր որ իմ 3-4 ամսու վիճակիս մէջ ստիպուեր էր զիս ձգելու հօրքուրիս, ու երթալ օտարին տղուն ծախելու իմ կաթը: Հիմա կը նայիմ այդ ծախումը կաթէն իմ մէջ երկնցած տրամային: Անահիտը կատարեալ մայր է: Սօն սիւքեն⁹⁴, ինչպէս կ'ըսեն: Արաքսին իր կարգին կը խենդենայ թոռնիկին վրայ: Ես կը յուսամ, վէպին մուտքը ընել այդ ձագուկով, որ 60-70 տարի առաջուան Օշականն է անշուշտ: Պիտի ըսես, ինչե՞ր: Քեզմէ առաջ ես եմ ըսեր:

Ժ)- Ահա քեզի երկու օր արժող իմ գիրը: Ուրիշներու գրածները - բացի Արամէն - ինձմէ ժամանակ անգամ չեն խլեր: Քեզի պարտատր կ'ըզգամ լրա-

գիր դառնալու: Քեզմէ չեն պահանջեր փոխադարձ շատախօսութիւն: Տիրանին, Վահէին միջոցով լուրերը կու գան: Ինչ անուշիկ տողեր ունի Սիրանը: Բայց ինչ անսփոփ հոգի: Հաւանաբար Արաքսը գրէ: Անոր առողջութիւնն ալ ուրիշ տագնապ: Յաճախ կը հարցընեն ես ինձի.- ե՞րբ եղեր եմ քիչ մը բաց, ուրիշներու գիծէն, առնուազն սնտեղուկ ժպիտով մը քօղվելով սերը հագեր, գործածելու համար Թլկատենցիին մէկ շատ իրաւ պատկերը: Ու կը գտնեն որ առիկա նորէն մեր պատանութեան Պրուսան է, որուն պիտի տամ առնուազն հազար էջ: Կը գուշակես թէ տեղ պիտի ունենաս անոր մէջ, մայրդ, հայրդ, քոյրերդ, Էօժէնը, Մարգրիտը, Աւելուն, Հերմինները, թրքուհիները, թուրքերը, ջարդերն ու այդ քաղաքին հայութիւնը: Փոխադրէ ճակատը գեղ, ձերը, մերը, կորած գեղերը, թուրքերը ...: Որքան շատ ու խորունկ ապրումներ: Ու որքան քիչ ինձի տրամադրուած ժամանակը այդ ամէնը նուաճելու:

ԺԱ)- Կարգին հետաքրքրուած եմ Բարիզ փոխադրուելու երազով: Պէտք էր ըրած ըլլայի քայլը Պոլսէն, հիմա տղաքս գործի կ'ըլլային ...: Դրամներու ելեւէջին վրայ քու հեղինակաւոր կարծիքդ ալ մի մոռնար դնել գիրիդ մէջ: Աւելորդ է յիշեցնել որ Յոբելեանի համար կատարուելիք դիմումներուն, վճարուելիք գիրերուն հարցը կու գայ առաջին գիծի: Առ այժմ յոգնեցայ: Նամակը չեմ գոցեր, Արաքսն ալ կարծեմ ունի բաժին Սիրանին կամ Վահէին: Ես դպրոցէն կը գրեմ: Տուն դարձիս պիտի տեսնեմ աւելնալիքները⁹⁵:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ 1945ին, Երուսաղէմի Կիւրեղ պատրիարք Իսրայէլեանի նախագահութեամբ, Օշականի գրական գործունէութեան քառասնամեակը տօնելու համար, կազմուած է Յոբելեանական Կեդրոնական Յանձնախումբ մը, որ յատուկ գեկոյցով բացուած յայտարարած է յոբելեանական տարին: Նոյնանպատակ յանձնախումբեր կազմուած են նաեւ այլ վայրերու մէջ:
- ² Չուտ հայաբնակ գիւղ Պրուսայի Վիլայէթի Ենի Շեհիր գաւառակին մէջ: Գիւղը ունեցած է իր եկեղեցին ու դպրոցը: Գիւղացիներուն զխաւոր զբաղումը եղած է շերամապահութիւնը:
- ³ Չուտ հայաբնակ գիւղ՝ Պրուսայի Վիլայէթին մէջ, Նիկիոյ Լիճէն ոչ շատ հեռու: 1915ի Տեղասպանութենէն առաջ ունեցած է 1000 տուն՝ մօտաւորապէս 12 հազար բնակիչով: Գիւղացիները զբաղած են առաւելաբար ձիթենիի ու խաղողի այգիներու մշակումով, ինչպէս նաեւ շերամաբուծութեամբ:
Մէլիօզը ունեցած է Ս. Հրեշտակապետ անունով ընդարձակ եկեղեցի մը՝ վեց քահանայ հայրերով, նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ անուամբ տղայոց ու Ս. Հռիփսիմէ անուամբ աղջկանց վարժարաններ՝ միասնաբար 7-800 աշակերտ-աշակերտուհիներով:
Մէլիօզցի է նաեւ ծանօթ նկարիչ Ժանսէմը (Յովհաննէս Սէմերճեան):
- ⁴ Գէորգ Չագրեան, «Յակոբ Օշական (Իր Յոբելեանին Առիթով)», *Յասար*, Փարիզ, 17 Մայիս 1947:
- ⁵ Գէորգ Չագրեան, «Յակոբ Օշական (Իր Կեանքն Ու Գրականութիւնը)», *Հայրենիք Ամսագիր*, Պոսթոն, ԻԸ. տարի, թիւ 12 (299), Դեկտեմբեր 1950, էջ 33:
- ⁶ *Հայրենիք Ամսագիր*, Պոսթոն, ԻԸ. տարի, թիւ 12 (299), Դեկտեմբեր 1950, էջ 33-47:
- ⁷ Մեր տրամադրութեան տակ ունինք այդ յօդուածը, տպուած՝ Փարիզի *Արեւմուտքին* մէջ: Մեր ունեցածը թերթին մէկ էջն է միայն, որուն վրայ թիւ ու թուական չեն նշանակուած:
- ⁸ Մեր տրամադրութեան տակ եղած կտրօնին վրայ չէ նշուած թերթին անունը կամ թուականը: Հաւանաբար Պոսթոնի *Հայրենիք Օրաթերթն* է ան:
- ⁹ Գ. Չագրեան, «Գուշակ Տէրվիւշը», *Բագին*, Գ. տարի, թիւ 12, Դեկտեմբեր 1964, էջ 34:

- ¹⁰ Գրուած է Արմաշէն: Նախ հրատարակուած է Օշականի նուիրուած Չագրեանի *Հայրենիք Ամսագիր*ին մէջ լոյս ընծայած վերոնշեալ յօդուածին մէջ (էջ 34-35), ապա՝ արտատպուած է Պօղոս Սնայեանի կազմած Օշականի *Նամակահի Ա. Հատոր*ին մէջ (Պէյրութ, 1983, էջ 9-10):
- ¹¹ Այս նամակին Բ. եւ Դ. հատուածները տպուած են Չագրեանի՝ Օշականի մասին գրած յօդուածաշարքին մէջ (*Յառաջ*, արտատպումը՝ *Յուսարէր Ամսագիր*, Դ. տարի, թիւ 5, 19 Դեկտեմբեր 1947, էջ 4-5 եւ *Ազդակ*, 1980): Չագրեան զանոնք հրատարակելու ժամանակ ըրած է բնագրային բազմաթիւ փոփոխութիւններ, զորս չենք նշած հոս, բացի՝ մէկէն:
- ¹² Նկատի ունի իր երկրորդ զուակը՝ հրապարակագիր, գրականագետ եւ բանաստեղծ՝ Վահէ Օշականը:
Վ. Օշական ծնած է Փրովտիւ, Պուլկարիա, 1922ին: Մանկութիւնն ու պատանեկութիւնը անցուցած է Կիպրոս եւ Պաղեստին: Յաճախած է Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, ապա՝ 1935ին տեղափոխուած է Երուսաղէմ եւ 1940ին աւարտած տեղոյն Անգլիական Բարձրագոյն Վարժարանը: 1946ին անցած է Փարիզ ու հետեւած Մորպոնի Համալսարանի գրականութեան դասընթացքներուն եւ աւարտած է զայն 1951ին: Աւելի ետք, ստացած է դոկտորայի աստիճան: Երկար տարիներ ապրած է Պէյրութ, իսկ 1975ին անցած է Միացեալ Նահանգներ, ուր եւ մահացած է 2000ին:
Հրատարակած է բազմաթիւ գիրքեր, ինչպէս՝ *Զաղար. Դիցազներգութիւն Մը Ա. Հատոր*, (Պէյրութ, 1963), *Փախստականը* (Անթիլիաս, 1987) եւն.:
- ¹³ Օնորէ Տը Պալզաք՝ Ֆրանսայի մեծագոյն վիպագիրներէն մէկը (1799-1850): Օշական ունի անոր գրականութեան նուիրուած ուսումնասիրութիւն մը, որուն մասին ակնարկութիւն մը կայ քիչ մը վարը՝ երրորդ նամակին մէջ:
- ¹⁴ *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան*, որուն առաջին հատորն է միայն որ լոյս տեսաւ հեղինակին կենդանութեան, 1945ին, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 367 էջով: Մնացեալ հատորները տպուեցան աւելի ետք, Երուսաղէմ եւ Պէյրութ, հասնելով մինչեւ վերջին՝ 10րդ հատորին, որ լոյս տեսաւ 1982ին:
- ¹⁵ Օշականի բազմահատոր վէպը, որ նախ որպէս թերթի լոյս տեսաւ Գահիրէի *Յուսարէր*ին մէջ (1932-1934), ապա՝ առանձին երեք հատորներով, Գահիրէ, յաջորդաբար 1932, 1933 եւ 1934ին: Աւելի ետք, 1988ին, Պօղոս Սնայեանի խմբագրութեամբ, վերահրատարակուեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Տպարանէն, կրկին երեք հատորներով:
Հոս Օշականի ակնարկութիւնը կը վերաբերի վէպի շարունակութեան:
- ¹⁶ Ակնարկութիւնը հաւանաբար կ'երթայ 1995ին Լոս Անճելըս տպուած *Կեանքին Պէս* վէպին, որ որպէս ենթախորագիր ունի *Հէքիաք Մը (Մեր Ժամանակներէն)*, եւ որ կը ներկայացուի որպէս շարքի մը առաջին հատորը: Այս վէպին մասին տես նաեւ՝ հոս հրատարակուող երրորդ նամակին Ը. հատուածը:
- ¹⁷ Նախադասութեան ընթերցումը երկբայելի է, որովհետեւ թուրքը ծալուելով դարձած է դժուարընթեռնելի:
- ¹⁸ Օշականի նուիրուած Չագրեանի «Յակոբ Օշական (Իր Յորելեանին Առիթով)» յօդուածին մէջ, յիշեալ էջերուն թիւը տրուած է որպէս 10000:
- ¹⁹ Sou՝ դրամական միասոր՝ ֆրանսական ֆրանքի մէկ քսաներորդ արժէքով:
- ²⁰ Խօսքը կը վերաբերի բանաստեղծ, վիպագիր, ԺԹ. դարու արեւմտահայ զարթոնքի սերունդի աչքի ինկող դէմքերէն Խաչատուր Միսաքեանին՝ Պուէտին (1805-1891), որուն ընդարձակ էջեր տրամադրած է Օշական *Համապատկեր*ի առաջին հատորին մէջ (էջ 147-167): 150 ոսկիի հետ կապուած վերոյիշեալ դէպքը տես՝ յիշեալ հատորին մէջ, էջ 161:
- ²¹ Ֆրանսերէն՝ բանալի, գործի յաջողութեան երաշխիքի իմաստով:
- ²² Ֆրանսերէն՝ լաւ որոշադրուած, ճշդորոշուած:

- ²³ Փարիզի յոթելենական հանդիսությունը տեղի ունեցած է 24 Մայիս 1947ին, նախագահությամբ Արշակ Չոպանեանի: Բանախօսներ՝ Գեորգ Չազրեան, Շախար Նարդունի, Ա. Խանտանեան եւ Յովսէփ Սվաճեան: Օշականի խօսքը կարդացած է իր գաւակը՝ Վահէ Օշական: Մինչ այդ, կազմուած էր 41 հոգիէ բաղկացած Յոթելենական Յանձնաժողով մը:
- ²⁴ «Երկնքի Դամբով (Խաղ Մը Մեր Ժամանակներէն, Դրուագ Մը Մեր Տարագրութենէն)»: Նախ լոյս տեսած է *Հայրենիք Ամսագիր*ին մէջ (Ապրիլ-Յուլիս 1936), ապա՝ առանձին հատորով, Պէյրութ, 1985ին:
- ²⁵ Նկատի ունի հայ բեմի մեծագոյն վարպետներէն Աշօ (Արշալիր) Շահխաթունի-Շահխաթունեանը, որ ծնած է 1885ին: Հայաստանի առաջին հանրապետութեան օրերուն եղած է Երեւանի զինուորական պարտա: Հայաստանի խորհրդայնացումէն ետք, անցած է արտասահման եւ 1924էն ապրած է Փարիզ, ուր մնացած է մինչեւ մահը՝ 1957: Յրանալի մէջ, դերեր ստանձնած է բազմաթիւ օտար համր ֆիլմերու մէջ: Խաղցած է նաեւ Ջօր. Անդրանիկի նուիրուած ֆիլմին մէջ՝ մարմնաւորելով մեծ հերոսին կերպարը: Շահխաթունիի եւ Տրդատ Նշանեանի հետ Օշականի կապը կու գայ Պոլսէն, երբ անոնց ջանքերով վերակազմուած Պոլսոյ Հայ Տրամաթիկ Թատերախումբին առաջարկով՝ Օշական կը գրէ երեք թատերախաղեր:
- ²⁶ Նկատի ունի դերասաններ՝ տէր եւ տիկին Սիրուհի եւ Տրդատ Նշանեանները: Տրդատ ծնած է Սեբաստիա, 1892ին: Երեջ գաւակն է՝ Երլտրզի մահափորձին ձերբակալուած ու ապա անձնասպան եղած խոհարար՝ Նշան Նշանեանին: Կրթութիւնը ստացած է Պոլսոյ մէջ: Մինչեւ զինադադար, առաւելաբար ծառայած է թուրք բեմին, յետոյ՝ մաս կազմած է Պոլսոյ Հայ Տրամաթիկ Թատերախումբին (1919-1922): 1922ին անցած է Փարիզ եւ հիմնած տեղոյն համաժողով թատերախումբը: Պեմականի հետ շրջած է Եւրոպան: Բեմադրած է տասնեակ թատերախաղեր: Զբաղած է գրականութեամբ, գրելով վէպեր ու թատերախաղեր: Եղած է նաեւ թատերական նկարիչ ու քանդակագործ: Մահացած է 1964ին, Փարիզ, իսկ կինը՝ դերասանուհի Սիրուհին, ծնած է Պոլիս 1900ին: Երկար տարիներ դերեր վերցուցած է ամուսինին թատերախումբին մէջ:
- ²⁷ Հալէպի մէջ Օշականի Յոթելենական Հանդիսութիւնը կայացած է 1 Մայիս 1946ին, Սինեմա Ռոքսիի մէջ, հովանաւորութեամբ տեղոյն Ռսումնական Խորհուրդին: Բացման խօսքը արտասանած է Եղուարդ Տասնապետեան: Խօսք առած է նաեւ յոթելեանը:
- ²⁸ Պէյրութի մէջ Օշականի յոթելեանը տօնուած է 1946 Մայիս 4ին:
- ²⁹ Որքան կրցանք ստուգել, Եգիպտոսի մէջ Օշականի յոթելեանը չէ կատարուած:
- ³⁰ Կիպրոսի մէջ յոթելեանը տօնուած է 24 եւ 27 Մարտ 1946ին:
- ³¹ Որքան կրցանք ստուգել, Ամերիկա, միայն Նիւ-Եորքի մէջ կատարուած է Օշականի յոթելեանը:
- ³² Նկատի ունի բանաստեղծ, գրող, վիպագիր, խմբագիր, կրթական մշակ, հրապարակագիր եւ հասարակական գործիչ՝ Անդրանիկ Ծառուկեանը: Ծնած է Կիւրին, 1913ին: Մեծ Եղեռնի արհաւիրքները կրել է ետք, ապաստանած է Հալէպ եւ 1918-1922ին մնացած տեղոյն Հայկական Որբանոցին մէջ, որմէ ետք յաճախած է Ազգային Հայկազեան Վարժարան ու շրջանաւարտ եղած անկէ 1928ին: Ապա մեկնած է Պէյրութ եւ 1930-1934՝ յաճախած է Հայ Գեմարան: Վերադառնալով Հալէպ, 1935-1942՝ գործած է Ազգ. Չաւարեան Վարժարանէն ներս, որպէս հայերէնաւանդ ուսուցիչ: Ծառուկեան 1941ին Հալէպի մէջ հիմնած է գրականութեան եւ արուեստի *Նայիրի* պարբերագիրքը, որ տարբեր պարբերականութիւններով շարունակուած է լոյս տեսնել մինչեւ 1949, ապա թերթը՝ խմբագիրին հետ տեղափոխուած է Պէյրութ եւ հոն լոյս տեսած՝ որպէս շաբաթաթերթ 1953էն մինչեւ 1983, երբ Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով, Ծառուկեան կը հեռանայ Պէյրութէն եւ կը հաստատուի Փարիզ, ուր եւ կը մահանայ 20 Մայիս 1989ին:

Հեղինակ է բազմաթիվ գիրքերու, ինչպէս՝ *Եղերարայտ Ջերթողներ. Պետրոս Դուրեան, Միսաք Մեծարենց, Վահան Տէրեան, Մատթէոս Զարիֆեան*, (Պէյրուք, 1933), *Մոխրամանը* (Հալէպ, 1935), *Առագաստներ* (Հալէպ, 1939), *Թուղթ Առ Երեւան* (Հալէպ եւ Գահիթէ՝ 1945, Պէյրուք՝ 1957, 1964, 1992), *Մանկութիւն Չունեցող Մարդիկ* (Պէյրուք՝ 1955, 1980), Հին Երագներ Նոր Դամբաներ (Պէյրուք՝ 1960, 1982), *Վերջին Ամենայն* (Պէյրուք, 1980), *Նոր Հայաստան Նոր Հայեր* (Պէյրուք, 1983), Սէրը Եղեռնին Մէջ (Պէյրուք, 1987), *Մեծերը Եւ... Միսները* (Պէյրուք, 1992), *Երագային Հալէպը* (Պէյրուք՝ 1980, 1996), *Ամերիկեան Կողմն Աշխարհի* (Կլենտլէյ, 1999), *Առկայծող Հայեր Եւրոպայի Լոյսերուն Մէջ* (Հալէպ, 1999), եւն.:

³³ Ծառուկեանի ծանօթ պոէմը, որուն առիթով գրուած է Օշականի *Վկայութիւն Մը* հատորը: Ան 1945ին միաժամանակ հրատարակուած է Հալէպ (*Թուղթ Առ Երեւան* խորագրով) եւ Գահիթէ (*Հէյ Զա՛ն Երեւան* խորագրով), ապա արժանացած է տասնեակ վերահրատարակութիւններու:

³⁴ Օշականի Ապրիլ 24ի յիշեալ ելոյթին մասին տես՝ *Բագին*, Պէյրուք, 1978, թիւ 12 եւ Անահիտ Ոսկերիչեան, «Օշական Իր Մտերմութեան Մէջ», *Ազդակ*, 14 Նոյեմբեր 1983, թիւ 209 (15687), էջ 5:

³⁵ Նկատի ունի իր *Սփիտքը Եւ Իրաւ Բանաստեղծութիւնը* հատորը, լոյս տեսած Երուսաղէմ, 1945ին, 107 էջ, որ նուիրուած է Վահան Թէքեանի քերթողութեան:

³⁶ Կամ՝ Սիրանուշ, Չագրեանի երկրորդ կինը:

³⁷ *Համապատկերի* առաջին հատորին մէջ Գրիգոր Օտեանին յատկացուած է գիրքին վերջին եւ ընդարձակագոյն գլուխը՝ էջ 273-365:

³⁸ Պարսկերէն ծագումով թրքերէն՝ համաքաղաքացի, հայրենակից:

³⁹ Նկատի ունի բանաստեղծ եւ խմբագիր Վահան Թէքեանը (Կ. Պոլիս 1878-Գահիթէ 1945), որուն նուիրուած է Օշականի յիշեալ գործը:

⁴⁰ Թուղթը ծալլուելով մաշած է ու բառը դարձած՝ անընթեռնելի:

⁴¹ Տպուած՝ Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1942ին, ԻՂ-+672 էջ:

⁴² Հաւանաբար նկատի ունի Լեւոն Շիրինը, որուն մեկենասութեամբ լոյս տեսած է Օշականի *Ստեփանոս Միւնեցի* քնարախաղը 1938ին, Փարիզ: Թերես ալ նկատի ունի գրող, հրապարակախօս ու խմբագիր՝ Լեւոն Մոզեանը (1890-1958), որ այդ տարիներուն կ'ապրէր Փարիզ:

⁴³ Նկատի ունի գրող, խմբագիր, հրապարակագիր Շաւարշ Միսաքեանը, ծնած՝ Սեբաստիոյ Չիմառա գիւղը, 1888ին (այլ աղբիւր մը կու տայ 1884 թուականը): Հինգ տարեկանին ան ընտանեօք տեղափոխուած է Պոլիս, ուր ստացած է նախակրթութիւնը: Նետուելով լրագրութեան ասպարէզ, 1911ին՝ մէկ տարիով վարած է խմբագրութիւնը Կարնոյ *Յառաջին*: Մեծ Եղեռնի օրերուն, շրջան մը բանտարկուած է Պոլսոյ մէջ, ապա զինադադարին՝ ազատ արձակուած: Աւելի ետք հաստատուած է Փարիզ, ուր 1925ին հիմնած է *Յառաջ* օրաթերթը ու վարած անոր խմբագրութիւնը մինչեւ մահը՝ 1957:

⁴⁴ Նկատի ունի բանաստեղծ Բիւզանդ Թօփալեանը, ծնած Այնթապ, 1902ին: Ուսումը ստացած է ծննդավայրի Ազգային Ներսէսեան Վարժարանին մէջ, ապա՝ Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճին մէջ: Մեծ Եղեռնէն ետք, ժամանակ մը ապրած է Հալէպ, աւելի ետք անցնելու համար Փարիզ: Հրատարակած է բանաստեղծութիւններու վեց ժողովածուներ՝ *Այգահանդէս* (1924, Հալէպ), *Արեւագալ* (Փարիզ, 1936), *Լուսածնունդ* (Փարիզ, 1964) եւն., խմբագրած է նաեւ *Անդաստան* գրականութեան եւ արուեստի պարբերագիրքը (1952-1969): Ստեղծագործած է նաեւ ֆրանսերէնով եւ հրատարակած բանաստեղծական երկու գրքոյկ: Գրականութեան կողքին, պարապած է նկարչութեամբ եւ տուած անհատական բազմաթիւ ցուցահանդէսներ: Հալէպի ու Փարիզի մէջ բանեցուցած է իր «Արաքս» տպարանը, ուր տպած է բազմաթիւ հայերէն գիրքեր: Մահացած է Փարիզ, 1970ին:

- ⁴⁵ Լոյս տեսած է Հալէպ 1946ին, 124 էջ, որուն կցուած է Ծառուկեանի «Թուղթ Առ Երեւան»ը:
- ⁴⁶ Տպուած է Հալէպի *Նայիրի*ներուն մէջ, «Ապուլ Ալա Մաարի» խորագիրով (Մարտ 1947-Նոյ.-Դեկտ. 1949), 7 մասով:
- ⁴⁷ Նկատի ունի իր վերջին գաւակը՝ Կարօ Օշականը, ծնած Երուսաղէմ, 1937ին:
- ⁴⁸ Անահիտ Օշական, ապա՝ Ոսկերիչեան: Օշականի դուստրը: Ծնած է Ֆիլիպէ, Պուլկարիա, 1919ին:
- ⁴⁹ Արաքսի Օշական, ծնած՝ Աստարճեան, Օշականի կողակիցը:
- ⁵⁰ Ակնարկութիւնը կ'երթայ Ֆրանսահայ Գրողներու Ընկերակցութեան հրապարակած յայտարարութեան՝ տպուած երեք թերթերու մէջ՝ *Յառաջի* խմբագիր Շաւարշ Միսաքեանի դէմ՝ անոր «Խորհրդածութիւններ Յ. Օշականի Յորելեանին Չզգճման Մասին» խորագրով յօդուածին առիթով (*Յառաջ*, 20 Հոկտեմբեր 1946): Ընկերակցութիւնը մերժած է տօնել Օշականի յօրելեանը:
- ⁵¹ Ֆրանսերէն՝ խանգարիչ:
- ⁵² Ակնարկութիւնը կ'երթայ Փարիզին:
Խօսքը այն նշանատր դատավարութեան մասին է, երբ ծագումով հրեայ Տրէյֆիս անունով սպայ մը մահուան կը դատապարտուի Փարիզի մէջ: Էմիլ Ջոլա (1840-1902) այդ առիթով կը գրէ «Կը Դատապարտեմ» խորագրով նամակ մը, յորում՝ Ֆրանսայի նախագահ Ֆորին, ուր կը մեղադրէ Տրէյֆիսը դատապարտողները: Նամակը մեծ աղմուկ կը բարձրացնէ. Ջոլայի ու սեմականներու դէմ ցոյցեր կը կազմակերպուին. ընթացքին՝ շատեր կը վիրատուրուին եւ հարցը կը ստանայ սուր հանգամանք: Գործին միջամուխ կ'ըլլան Երեսփոխանական Ժողովը, բանակն ու ժողովուրդը, ու անոր պատճառով ալ կ'իյնայ Պրիսոնի դահլիճը: Խռովութիւնները կը հասնին նաեւ Ֆրանսայի կողմէ գրաւուած Ալճերիա, ուր մեծ թիւով հրեաներ կ'ապրէին: Աշխարհի ամբողջ մտաւորականութիւնը զօրավիզ կը կանգնի Ջոլայի ու այս առիթով ան կը ստանայ տասնեակ հազարաւոր զօրակցական նամակներ: Ջոլա ֆրանսական բանակին մեծաւորները անարգած ըլլալուն համար, զինուորական դատարանին կողմէ կը դատապարտուի մէկ տարուան բանտարկութեան եւ 32,000 ֆրանք տուգանքի: Եւ քանի որ ան կարողութիւն չունէր այդ գումարը վճարելու, աճուրդի կը հանուին իր անշարժ գոյքերը: Ֆակտէլ անունով հրատարակիչ մը նոյն գումարով կը գնէ աճուրդի դրամած առաջին իսկ առարկան՝ Ջոլայի սեղանը եւ կը փակէ անոր պարտքը: Ի վերջոյ, Տրէյֆիսի դատը կ'աւարտի հանրապետութեան նախագահին շնորհած ներման որոշումով: Ջոլայի յիշեալ գրութիւնը թարգմանուած է նաեւ հայերէնի:
- ⁵³ Նկատի ունի գրող Հրաչ Ջարդարեանը, որդին՝ Ռուբէն Ջարդարեանի: Ծնած է Խարբերդ 1892ին: Կրթութիւնը ստացած է Պոլսոյ Եսայեան Վարժարանին մէջ, ու աւելի ետք զայն շարունակած Կարնոյ Սանասարեանին, Թիֆլիսի Ներսէսեան, Էջմիածնի Գեորգեան Դեմարանին ու Երեւանի Թեմական դպրոցին մէջ, ապա՝ Պոլսոյ Կեդրոնականին: Հետեւած է Սորպոնի Համալսարանի գրականութեան դասընթացքներուն, եւ վերջապէս՝ Փարիզի Բժշկական Վարժարանէն վկայուած է որպէս ատամնաբուժ: Հաստատուելով Փարիզ, զբաղած է գրականութեամբ, գրելով առաւելաբար պատմութիւններ ու վէպեր: Աշխատակցած է սփիւռքահայ մամուլին: Առանձին հատորով հրատարակած գործերէն են՝ *Մեր Կեանքը* (Փարիզ, 1934) եւ *Որբացող Մարդիկը* (1954):
- ⁵⁴ *Արեւմուտք*, ազգային, գրական անկախ շաբաթաթերթ: Լոյս տեսած է Փարիզ, 1945-1952: 1946ի վերջերէն եղած է հրատարակութիւնը «Կիլիկեան Ընդհանուր Միութեան»: Առաջին շրջանի (1945-1946) խմբագիրները եղած են՝ Լեւոն Մոզեան, Բիզանդ Թօփալեան եւ Լեւոն Չորմիսեան, իսկ երկրորդ շրջանին (1947-1952)՝ Մեսրոպ Գույումճեան: Յիշեալ գրութիւնը լոյս տեսած է *Արեւմուտքի* նոր շրջանի թիւ 3 (90)ի մէջ, 30 Նոյեմբեր 1946, հետեւեալ վերնագրով. «Օշական Կ'օրհներգէ Խորհրդային Հայաստանը Ս. Գրիգոր Լուսատուրչի Բերնով»:

- ⁵⁵ 1946ի Փետրուարի իր թիով, Հալեայի *Նայիրի* ամսագիրը մամուլի տակ եղող Օշականի *Վկայութիւն Մը* հատորին էջ 72ի ծանօթագրութեան միացնելով էջ 28ի ծանօթագրութիւնը, գայն ընթերցողին ներկայացուցած է իր կողմէ տրուած պարագայական վերնագիրով մը՝ «Օշական Կը Դատէ Հայրենի Բերքը՝ Քառասնամեայ Վաստակին Ուժով» (էջ 278-281), որուն մէջ հայաստանեան գրականութեան մասին յայտնուած տեսակէտերէն սրտնեղած, այսպէս կոչուած «Յառաջդիմական» ճակատի թերթեր բուն պայքար կը շղթայագերծեն Օշականի դէմ, կասկածի տակ առնելով նոյնիսկ իր հայրենասիրութիւնն ու ամբողջ գրական վաստակը:
- ⁵⁶ *Օրն Օրերուն, Խորհուրդ (Մեր Ժամանակներէն), Երեք Արար Եւ Մէկ Պատգամ*, Երուսաղէմ 1947, 81 էջ:
- ⁵⁷ Նշուած գրութիւնը, «Պատգամը» խորագիրով տպուած է *Միտնի* Ի. տարուան 10րդ թիւին մէջ (Հոկտեմբեր 1946), էջ 189-192: *Արեւմուտքի* մէջ անոր արտատպումին մասին ակնարկութեան չհանդիպեցանք Նշանեանի նշուած Մատենագիտութեան մէջ:
- ⁵⁸ Ֆրանսերէն՝ երգչախումբ:
- ⁵⁹ *Ստեփանոս Միւնեցի Քնարախաղ Միջին Դարէն*, լոյս տեսած է Փարիզ, Տպարան «Արաքս», 1938ին, 128 էջ:
- ⁶⁰ Նկատի ունի գրող՝ Լեւոն Չորմիսեանն ու անոր *Կուսակցութիւնները Եւ Հայրենիքը* գիրքը: Չորմիսեան ծնած է Պրուսա, 1896ին: Նախակրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, անցած է Պոլիս ու յաճախած Կեդրոնական Վարժարան: Մեծ Եղեռնի օրերուն, ապաստանած է Հալեայ եւ երկու տարեշրջան դասաւանդած Ազգային Հայկազեան Վարժարանէն ներս: Շրջան մը վարած է Ազգային Առաջնորդարանի դիւանապետի պաշտօնը, ապա՝ տեղափոխուած Փարիզ, ուր խմբագրած ու հրատարակած է քանի մը թերթ եւ աշխատակցած բազմաթիւ ուրիշներու: Լոյս ընծայած է տասնեակ մը հատորներ, առաւելաբար պատմագիտական բնոյթի, որոնց մէջ առաւել արժէքատուր է *Համապատկեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմութեան* հինգհատորեակը (Պէյրուք, 1972-1979): Մահացած է Փարիզ, 1980ին:
- ⁶¹ Չորմիսեան նախ եղած է դաշնակցական, ապա՝ հ:
- ⁶² Նկատի ունի *Արեւմուտքի* խմբագիրներէն՝ Մեսրոպ Գույումճեանը: Ծնած է Տէօթթ Եօլ, 1899ին: Շրջան մը ուսուցչական պաշտօն վարած է տեղւոյն Սիսուան Որբանոցին մէջ: Տեղահանութենէն ետք, անցած է նախ Մարսէյ, ապա՝ Փարիզ, ուր 1947-1952 վարած է խմբագրութիւնը *Արեւմուտք* շաբաթաթերթին: 1950ականներու կէսերուն, անցած է Սան Փաուլօ (Պրագիլ), ուր եւ մահացած է 23 Յուլիս 1959ին:
- ⁶³ Նկատի ունի վիպագիր, բանաստեղծ, թարգմանիչ եւ կրթական մշակ՝ Կարապետ Փօլատեանը, որուն ստորագրութեան յաճախ կը հանդիպինք *Արեւմուտքի* թիւերուն մէջ: Փօլատեան ծնած է Մարաշ, 1911ին (այլ աղբիւր մը կու տայ 1914 թուականը): 1915ին հասած է Տէր Զօր եւ հրաշքով փրկուած՝ սպանդէն: 1921ին մտած է Հալեայի Ազգային Հայկազեան Վարժարանը, որմէ շրջանաւարտ ըլլալէ ետք՝ անցած է ֆրանչիսկեաններու տեղւոյն Շիպենիի Վարժարանը, ապա՝ մեկնած Ատիս Ապապա: 1931ին անցած է Մարսէյ, ուր չորս տարի հետեւած է Երկրաչափական Բարձրագոյն Վարժարանի դասընթացքներուն եւ նոյն քաղաքին մէջ անցընելով իր կեանքի մնացեալ տարիները՝ մահացած է 1986ին: Լոյս ընծայած է տասնեակ մը հատորներ, ինչպէս՝ *Կը Հրաժարիմ Հայութենէ...* (Փարիզ, 1949), *Չորոյցներու վեց հատորները* (Գահիրէ եւ Պէյրուք, 1952-1988), *Արծիւները Անապատին Մէջ* (Փարիզ, 1958) եւն.: Լիւք Անտրէ Մարսէլի հետ ֆրանսերէնի թարգմանած է հայ բանաստեղծութեան հատընտիր մը (Պէյրուք, 1980):
- ⁶⁴ Հայկ Պէրպլերեան (1887-1978): Բանասէր, թարգմանիչ, որ ծնած է Պոլիս: Կրթութիւնը ստացած է տեղւոյն Կեդրոնական Վարժարանին մէջ: Եգիպտոսի մէջ եղած է Ազգային Պատուիրակութեան թարգման: Հաստատուելով Փարիզ, նուիրուած է բանասիրութեան՝ առաւելաբար զբաղելով Բիւզանդական եւ Օսմանեան կայսրութիւններու ժամանակաշրջանը ընդգրկող նիւթերով, մանաւանդ՝ պոլսահայութեան պատմութեան

վերաբերող հարցերով: Հայերենի թարգմանած է օտար հայագետներու հայագիտական բազմաթիւ ուսումնասիրութիւններ, իսկ ֆրանսերէնի՝ բազմաթիւ հայագիտական յօդուածներ: Եղած է քարտուղար-խմբագիրը Փարիզի *Révue des Etudes Arméniennes* հայագիտական հանդէսին (1964-1977): Մահացած է Փարիզ:

Պերպլերեան *Արեւմտքի* մէջ ստորագրած է երկու գրութիւն՝ «Բիւզանդիոն Եւ Անտիոք Փիլարոսու Կուրապաղատին Օրով» (թարգմանութիւն, 1946, թիւ 1(88), 2(89) եւ 3(90) եւ «Պ. Է. Թովչեան Եւ Արեւմտահայ Աշխարհաբարին Միասնականութիւնը» (Ա. տարի, թիւ 18, 23 Մարտ 1947):

⁶⁵ Նկատի ունի բանաստեղծ եւ արձակագիր Նիկողոս Սարաֆեանը, որ ծնած է Պոլիս-Վառնա ճանապարհին, շոգենաւի մը մէջ, 1902ին: Նախակրթութիւնը ստացած է Վառնայի Գիւրճեան, ապա Ազգային եւ ֆրանսական Սէն Միշէլ վարժարաններուն մէջ: Համաշխարհային Առաջին Պատերազմի օրերուն անցած է Ռումանիա, ապա Ռուսիա: Չինադադարին, 1919ին յաճախած է Պոլսոյ Կեդրոնական Վարժարանը, ուսուցիչ ունենալով Օշականը: Քենալական շարժումին պատճառով, կիսատ ձգելով Կեդրոնականը, ապաստանած է Փարիզ, որ անցուցած է կեանքին մնացեալ տարիները, մինչեւ մահը՝ 1972: Սարաֆեան լոյս ընծայած է քանի մը հատոր՝ *Անջրպետի Մը Գրաստմը* (1927), *14 Քերթուած* (1933), *Միջնաբերդ* (1946) եւն.:

⁶⁶ Ֆրանսերէն՝ յաջողակ:

⁶⁷ Նկատի ունի Բենիամին Թաշեանը, որ ծնած է Ատափազար, 1892ին: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ, ապա՝ Պոլսոյ մէջ, հետեւելով Հինդլեանի «Նոր Դպրոց»ին: Մեծ Եղեռնի օրերուն աքսորուած է Աֆիոն Գարահիսար, ապա անցած է Ատափազար, Կ. Պոլիս, Յունաստան եւ հուսկ՝ Եգիպտոս, որ երկար տարիներ պարապած է ուսուցչութեամբ: 1947-1960 վարած է խմբագրութիւնը տեղւոյն *Յուսաբեր* օրաթերթին: Հեղինակած է քանի մը հատոր, ինչպէս՝ *Արշակունի Հայաստանի Հազարամեայ Փառքը*, (Գահիրէ, 1950), *Ներածութիւն Հայ Գրականութեան Պատմութեան* (Գահիրէ, 1961), *Թիրմ Ու Թերիմ* (Պէյրութ, 1968) եւն.: Մահացած է Գահիրէ, 16 Նոյեմբեր 1971ին:

⁶⁸ Վահրամ Թաթուլ (1887 Պոլիս-1943 Փարիզ⁶⁹): Բանաստեղծ: 1908-1909 մաս կազմած է Պոլսոյ *Ազրակ Շարաքաթերթի* խմբագրութեան: Մեծ Եղեռնէն փրկուած է՝ խուսափելով թրքական ոստիկանութեան հետապնդումներէն: Հեղինակ է բանաստեղծութիւններու երկու ժողովածուներու՝ *Հին Ու Նոր Տաղեր* (Փարիզ, 1940) եւ *Ամենայն Չգուշութեամբ* (Փարիզ, 1941): Մեծարեց իրեն ձօնած է իր «Իրիկունս» բանաստեղծութիւնը, իսկ Թաթուլ Օշականին նուիրած է իր «Փիատէ» քերթումը:

⁶⁹ Հրանդ Սամուէլ ծնած է Մարաշ, 1891ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն վարժարաններուն մէջ, ապա՝ անցած է Ժամհարեան եւ Գենանեան որբանոցներուն մէջ, հուսկ՝ մտած է Սիսի Ժառանգատրաց Վարժարանը: Աւելի ետք ուսումը շարունակած է Տարսոն եւ Պոլիս: Համաշխարհային Ա. Պատերազմի օրերուն, որպէս սպայ, ծառայած է օսմանեան բանակին: 1920ին անցած է Փարիզ: Պոլսոյ եւ Փարիզի մէջ վարած է խմբագրութիւնը քանի մը թերթերու: Ունի թարգմանութիւններ եւ յօդուածներ զանազան թերթերու մէջ: Հիմնած ու ամբողջ տասնամեակներ բանեցուցած է Փարիզի նշանաւոր Գրատուն Սամուէլեանը:

⁷⁰ Նկատի ունի Հրանդ Բալուեանը, որ ծնած է Պոլիս, 1902ին (այլ աղբիւրներ կու տան 1904 թուականը): Կրթութիւնը ստացած է տեղւոյն Կեդրոնականին մէջ, ապա անցած է Փարիզ եւ հետեւած գրականութեան ու արուեստի դասընթացներու: Հոն՝ երկար տարիներ խմբագրած ու հրատարակած է *Չուարթնոց* հանդէսը (1929-1967, ընդմիջումներով): Հեղինակած է բազմաթիւ յօդուածներ հայ գրողներու եւ արուեստագետներու մասին: Մահացած է Փարիզ, 1968ին:

⁷¹ Տիրան Ոսկերիչեան, Օշականի փեսան, միակ դստեր՝ Անահիտին ամուսինը:

⁷² Թէւ տարեթիւ նշուած չէ, բայց հաստատաբար գրուած ըլլալու է 1947ին:

⁷³ Ֆրանսերէն՝ լեզուի ծանրութեան հիւանդութիւն:

- ⁷⁴ Ակնարկութիւնը կ'երթայ, 1922ին Պոլսոյ մէջ ներկայացուած իր «Նոր Պսակ» քատերախաղի քեմականացման առիթով՝ պոլսահայ մամուլին մէջ լոյս տեսած բազմաթիւ քննադատական յօդուածներուն:
- ⁷⁵ Ֆրանսերէն, առաջին հանգրուանը, առաջնակարգը իմաստով:
- ⁷⁶ Նկատի ունի Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքը, որուն Ժառանգաւորաց Վարժարանին մէջ կը դաստանդէր Օշական:
- ⁷⁷ Նկատի ունի գրող եւ խմբագիր Սկրտիչ Պարսամեանը, որ ծնած է Ակնայ Ապուշէխ գիւղը, 1886ին: Նախակրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, ուսումը շարունակած է Մեզրէի Կեդրոնական եւ Կարնոյ Սանասարեան վարժարաններուն մէջ: Ուսուցչական պաշտօններ վարած է Մեզրէ, Կարին, Տրապիզոն, Չորլու, Գոնիա եւ Կ. Պոլիս: 1922ին ապաստանած է Փարիզ, ուր անցուցած է կեանքի մնացեալ տարիները: Առանձին հատորով հրատարակած է քանի մը գիրք ու դասագիրք: Խմբագրած է *Ակն եւ Ակնցիք* ստուար աշխատութիւնը (Փարիզ, 1952): Աշխատակցած է նաեւ զանազան թերթերու:
- Պարսամեան իր եղբոր՝ Մերուժանի հետ, Փարիզի մէջ խմբագրած է *Կեանք եւ Արմեսար* (1931-1935՝ տարեգիրք, 1936-1940՝ ամսագիր), որուն աշխատակցած է նաեւ Օշական: Ան մէկէ աւելի առիթներով անդրադարձած է Օշականի գրականութեան, որուն նուիրուած առանձին մենագրութիւն մըն ալ պատրաստած է: Օշականի հետ ունեցած է նաեւ մամակագրական կապ: Մահացած է 1965ին:
- ⁷⁸ Ֆրանսերէն, շատ վնասակար, ինքնավնաս, տհաճ, վատառողջ:
- ⁷⁹ Փարիզի յորելեանին Օշականի խօսքը կարդացած է զաւակը՝ Վահէն:
- ⁸⁰ Ֆրանսերէն՝ համընդհանուր, մեծաքանակ, խմբային:
- ⁸¹ Angine d'effort: Ֆրանսերէն՝ սրտի տագնապ:
- ⁸² Ֆրանսերէն՝ սրտի կաթուած եւ տագնապ:
- ⁸³ Նկատի ունի Սիրան Մեզան ու անոր խմբագրած *Երիտասարդ Հայրիկ* գրական-գեղարուեստական ամսագիրը (1932-1934 եւ 1947-1968), որ լոյս տեսած է Պէյրութ: Մեզա քոյրն է վաղամեռիկ բանաստեղծ Մատթոն Ջարիֆեանին: Ծնած է Պոլիս, 1903ին, ուր ստացած է իր նախնական եւ երկրորդական կրթութիւնը: Աւելի ետք, տեղափոխուած է Պէյրութ, ուրկէ անցած է Միացեալ Նահանգներ եւ հետեւած՝ Քոլումպիա Համալսարանի Լեզուներու եւ Գրականութեան Բաժինի դասընթացքներուն, զորս արարտած է պակասուոր արուեստից տիտղոսով: Խմբագրած թերթին կողքին, աշխատակցած է այլ թերթերու: Առանձին հատորով հրատարակած է *Պատմէչը* (1959) եւ *Մեղաւորութիւն* (1960): Մահացած է Պէյրութ, 1973ին:
- ⁸⁴ Խօսքը կը վերաբերի Օշականի «Պալգաքին Առիթով» գրութեան, որուն առաջին մասը լոյս տեսած է *Արեւմուտքի* Ա. տարուան 21րդ թիւին մէջ (13 Ապրիլ 1947) եւ շարունակուած՝ մինչեւ թիւ 26 ու յետոյ նաեւ՝ թիւ 34 եւ 89 (3 Հոկտ. 1948):
- ⁸⁵ Ակնարկութիւնը կ'երթայ իր «Հայ Բանասիրութիւնը եւ Էջմիածին» ուսումնասիրութեան, որմէ հատուած մը նախապէս տպուած է *Միտնի* մէջ (թիւ 3, Մարտ 1947, էջ 119-136 եւ թիւ 10 եւ 11) ու յետոյ նաեւ առանձին գիրքով՝ «Արեւելահայ Բանասիրութիւնը եւ Էջմիածին» խորագիրով (Անթիլիաս, 1948, Ձ. +208 էջ):
- ⁸⁶ Light-motif - Ֆրանսերէն՝ յանկերգ:
- ⁸⁷ *Չուարթնոց*՝ պարբերաբերք գրականութեան եւ արուեստներու, լոյս տեսած Փարիզ, 1929-1967 թուականներուն, որոշ ընդհատումներով: Խմբագիր՝ Հրանդ Բալուեան: Նշանեանի մատենագիտութեան մէջ կարելի չեղաւ գտնել վերելի ակնարկուած յօդուածին մասին որեւէ նշում:
- ⁸⁸ Նկատի ունի 1923ին ստորագրուած Լոզանի Դաշնագիրը, որ կնքուեցաւ Թուրքիոյ եւ Եւրոպական քանի մը պետութիւններու, Մ. Նահանգներու եւ Ճափոնի միջեւ: Այս Դաշնագրով է որ հաստատուեցան Թուրքիոյ արդի սահմանները: Հոն ո'չ մէկ յիշատակութիւն կայ Հայաստանի եւ հայերու մասին, բացի Թուրքիոյ մէջ ապրող ազգային

և կրօնական փոքրամասնություններուն տրուելիք ազատութիւններու վերաբերող հատուածէն:

⁸⁹ Հաւանաբար պիտի ըլլայ Arrière` անցած, շրջանցուած, ետեւ նետուած իմաստով:

⁹⁰ Անահիտ Օշական Երուսաղէմի մէջ բարձրագոյն ուսում ստանալէ ետք, 1938ին կը յաջողի իրեն համար թոշակ մը ապահովել՝ Փարիզի մէջ բժշկութիւն ուսանելու եւ նոյնիսկ կը ստանայ ճանփորդութեան անցագիր: Սակայն վրայ հասնող աշխարհամարտը պատճառ կ'ըլլայ, որ չկարողանայ մեկնիլ եւ շարունակել իր ուսումը:

⁹¹ Ֆրանսերէն՝ ինքնակենսագրական:

⁹² Նկատի ունի խմբագիր, հրապարակագիր, գրաքննադատ եւ դաշնակցական գործիչ՝ Գուրգէն Մխիթարեանը, որ ծնած է Շապին Գարահիսար, 1890ի Յունիսին: 1907ին աւարտած է ծննդավայրի Մուշեղեան Վարժարանը, 1912ին՝ Պոլսոյ Կեդրոնականը: Երկու տարի ուսուցչական պաշտօն վարելէ ետք, 1914ին զինուորագրուած է օսմանեան բանակին: Չինադադարէն ետք, Պոլսոյ մէջ զբաղած է ուսուցչութեամբ եւ խմբագրական աշխատանքներով: Աւելի ետք, անցած է Գահիրէ, ուր կրկին զբաղած է ուսուցչական եւ խմբագրական աշխատանքներով, մանաւանդ՝ *Յուսաբերի* մէջ, որուն ծառայած է աւելի քան քառորդ դար: 1947ին անցած է Միացեալ Նահանգներ ուր 1952ին ստանձնած է խմբագրութիւնը *Հայրենիք Օրաբերքի*ն: Տարբեր ժամանակներու վարած է քանի մը այլ թերթերու խմբագրութիւնը եւս: Կատարած է նաեւ թարգմանութիւններ: Գրականագիտական գործերը հաւաքուած են *Լատորդ Դար Գրականութիւն* խորագրով հատորին մէջ (Գահիրէ, 1946): Մահացած է 25 Նոյեմբեր 1962ին:

⁹³ Նկատի ունի Անահիտին առաջնեկը՝ Թալինը, որ աւելի ետք անգլերէնի թարգմանած է Օշականի գործերէն:

⁹⁴ Սօն թրքերէն՝ վերջին, սիւքէմ ֆրանսերէն՝ նորածնութիւն:

⁹⁵ Նամակը կիսաւարտ է եւ նոյնիսկ ստորագրութիւն չի կրեր:

THREE UNPUBLISHED LETTERS FROM HAGOP OSHAGAN TO
HAGOP CHAKERIAN
(Summary)

MIHRAN MINASIAN
mihran.min@gmail.com

Three unpublished letters of the renowned Armenian literary critique, novelist Hagop Oshagan (1883-1948) which are dated at 1946-47 are being published here.

These letters are addressed to the closest friend of Oshagan, Hagop Chakerian. Though Chakerian and Oshagan had corresponded frequently only a few of their letters have been published so far.

The three letters published here are of special value due to the fact that they correspond to the last stage of Oshagan's life.

The letters disclose the plans and projects of Oshagan regarding his books, *Hamabadger Arevmedahay Kraganutyun* (Panorama of Western Armenian literature), *Mnatsortats* (The Remnants), his life novel, and small research articles on contemporary Armenian writers. Furthermore, the letters shed light on Oshagan's health issues, his thoughts regarding the Jubilee celebrations in acknowledgment of his literary critical penship as well as his views regarding Soviet Armenia and the apathy he faced from a number of partisans.